

## ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏ ԵՒ ԼԱԻՐԵՆԹԵԻ ԽՈՐՀՐԴԱԿՅԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՅԱՆ

Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ Ռուսիոյ Նախագահի անձնական բանագնաց Ալեքսանտր Լաւրենթեւի ի անոր ընկերակցող պատուիրակութեան հետ խորհրդակցեցաւ սուրիացի տեղահանուածներու տունդարձի գործնական քայլերուն եւ արաբական ու միջազգային լուծման առաջարկներուն շուրջ:



Կողմերը խորհրդակցեցան Նաեւ թրքական ուժերը սուրիական հողերէն դուրս բերելու Թուրքիոյ մերժումին եւ զինեալ ահաբեկչական խմբաւորումներուն հսկողութեան տակ գտնուող շրջաններուն մէջ սուրիացիներու մարդասիրական օգնութիւններու հասանելիութեան շուրջ:

Նախագահ Ասատ շեշտեց, որ ԱՄՆ-ն եւ արեւմուտքը քաղաքական ու տնտեսական համաշխարհային տագնապ եւ անկայուն իրավիճակ ստեղծեցին, որպէսզի Ռուսիոյ դիրքն ու միջազգային ներկայութիւնը Նսեմացնեն: Անոնք Ուքրանիան որպէս գէնք օգտագործեցին ու այս տագնապին բացասական հետեւանքները սկսան ազդել մեր երկիրներուն վրայ եւս՝ ընկերային եւ տնտեսական մակարդակներով:

Շար.՝ Էջ 6 >

## ՀԱՄԱԺՈՂՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՀԱԽԱՔՆԵՐ ԵՐԵՒԱՆԻ ԵՒ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԷՋ

25 Յուլիսին, Արցախի Հանրապետութեան պետական օրհներգով Ստեփանակերտի Վերածնունդի եւ Երեւանի Ազատութեան հրապարակներուն վրայ տեղի ունեցան համաժողովրդական հանրահաւաքներ՝ Արցախի ապաշրջափակումին եւ անոր ժողովուրդին ինքնորոշման իրաւունքը յարգելու պահանջով:



«Կը պահանջենք ՀՀ իշխանութիւններէն հրաժարիլ Արցախը Ատրպէյճանի կազմին մէջ ճանչնալու մտայղացումէն, Արցախին ու Արցախի ժողովուրդը

չեն կրնար ըլլալ Ատրպէյճանի կազմին մէջ», Ստեփանակերտի մէջ յայտարարեց Արցախի պետական Նախարար Գուրգէն Ներսիսեան:

Արցախի Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տէր Վրթանէս Եպիսկոպոս Աբրահամեան Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ յայտարարեց. «Արցախը ենթակայ չէ վաճառքի: Արցախը Աստուածապարգեւ Հայաստան աշխարհի անսնացորդ մասն է: Արցախը՝ սրբութիւն ու հող է: Արցախը՝ պատմութիւն ու ժողովուրդ է: Այսօր կանգնիլ Արցախի կողքին, կը նշանակէ կանգնիլ մեր խիղճի եւ արդարութեան կողքին, կանգնիլ քաղաքակրթութեան մարդու իրաւունքներու կողքին»:

## ՆՏՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ԱՐՅԱՆԻ ՄԵՐ ԺՈՂՎՈՐԴԸ ՏՆՈՒՆԻՆ Է ԱՐՅԱՆԻՆ»

Բարբարոս Ատրպէյճանի կողմէ շուրջ ութ ամիսներէ ի վեր շրջափակման մէջ գտնուող Արցախը կը դիմագրաւէ սննդեղէնի, դեղորայքի եւ մարդկային տարրական պահանջներու լուրջ դժուարութիւններ: Սփիւռքի մեր հայորդիները, կազմակերպութիւնները եւ եկեղեցիներ լծուած են արցախահայութեան ինքնիշխանութիւնն ու ինքնորոշման իրաւունքը պաշտպանելու ու պահպանելու աշխատանքներուն:



Արդարեւ, Երեքշաբթի, 25 Յուլիս 2023-ի երեկոյեան, Երեւանի Ազատութեան եւ Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակներուն վրայ տեղի ունեցան ժողովրդական հանրահաւաքներ՝ Արցախի ապաշրջափակման եւ անոր ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը յարգելու պահանջով:

Շար.՝ Էջ 6 >

## «ԱՐՅԱՆԸ ՄԵՐ ԿԻՉԱԿԵՏՆ Է». ՀԱԼԵՊԻ ՄԷՋ ԱՐՅԱՆԻՆ ՆՈՒՐՈՒՄԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ

Արցախի ժողովուրդի դիմագրաւած տագնապին, Ատրպէյճանի յանցագործութիւններու եւութեան հանրութիւնը իրագէլ դարձնելու ու Արցախին օժանդակելու միջոցներ որոնելու համար Ուրբաթ, 21 Յուլիսին, Սուրիոյ Հայ Դատի Կեդր. Մարմին (Այսուհետեւ՝ ՍՀԴԿՄ) Նախաձեռնութեամբ եւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի հովանաւորութեամբ, «Լեւոն Շանթ» սրահէն ներս տեղի ունեցաւ «Արցախը Մեր Կիզակետն Է» խորագիրով հանրային լսարան:

Լսարանին ներկայ էին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդը, Բերիոյ կաթողիկէ հայոց Առաջնորդ Արիի. Տէր Պետրոս Սրբ. Արք. Միրիաթեանը, Հայ Աւետարանական Համայնքապետին ներկայացուցիչը, Սուրիոյ խորհրդա-



րանի երեսփոխան դոկտ. Լիւսի Իսկէնեանը, հալէպահայ կազմակերպութիւններու ներկայացուցիչներն ու Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Վարչութեան եւ հալէպահայ միութիւններու ներկայացուցիչներ:

Օրուան հանդիսավար, ՍՀԴԿՄ-ի անդամ Նաթալի Մատարիկեան Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգներէն ետք ձեռնարկին մեկնարկը յայտարարեց:



Այսուհետեւ ՍՀԴԿՄ-ի անդամ Սարին Գրիգորեան բացման իր խօսքով յայտնեց, որ Ատրպէյճան ամէն ջանք ի գործ կը դնէ Արցախը հայաթափելու, բռնագրաւելու, արցախահայութիւնը ցեղասպանութեան ենթարկելու, սակայն 44օրեայ պատերազմի արհաւիրքը ապրած Արցախի ժողովուրդը կը շարունակէ դիմադրել այս անգամ ալ դէմ դնելով անմարդկային շրջափակումին ու կենաց մահու կռիւ մղելով որչա՞ք աշխարհին արդարութեան հաստատման կոչ կ'ուղղէ, սակայն մարդկային իրաւունքներու պաշտպանութեան համար յառաջացած կազմակերպութիւնները գործնական ոչ մէկ միջամտութիւն կ'ընեն, այլ պարզապէս բերանացի կոչերով իրենց պարտքը կատարած կը սեպեն, գերադասելով իրենց քաղաքական կամ տնտեսական շահերը:

Եզրափակելով Գրիգորեան ըսաւ, որ սուրիահայութիւնը զօրավիգ կը կանգնի Արցախի ժողովուրդին ու կոչ կ'ուղղէ միջազգային ընտանիքին վերջ տալու Ատրպէյճանի կողմէ 8 ամիսէ ի վեր շարունակուող Բերձորի միջանցքի՝ կեանքի ճանապարհի, շրջափակման ու անոր հետեւանքով ստեղծուած մարդկային աղէտին:

Շար.՝ Էջ 12 >



## Տեղական Լրագրող

### Խմբագրական

## ԼԻԶՊՈՆԸ ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ ԿՈՉՆ ԵՐ ՆԱԵՒ

### (Լիզպոնի սխրագործության 40-ամեակին առիթով)

27 Յուլիս 1983-ին հինգ դաշնակցական երիտասարդներ կազմակերպեցին եւ յանդգնութեամբ իրականացուցին Լիզպոնի գործողութիւնը՝ յստակ պատգամներ ուղղելով ե՛ւ միջազգային հանրութեան, ե՛ւ հայ ժողովուրդին:

Գործողութեան նպատակը եթէ մէկ կողմէ Յայ Դատը միջազգայնացնելն էր, միւս կողմէ հայ ժողովուրդին յուշելն էր, որ ունինք խլուած իրաւունքներ, որոնց տիրանալու միակ միջոցը գաղափարական ակունքներէ սնանող անսահանջ պայքարն է:

Լիզպոնի հինգ երիտասարդները հայ յեղափոխութեան եւ ուժական պայքարի գաղափարը կրողներն էին ու 40 տարի առաջ իսկ մեզ պատգամեցին, որ ոչ մէկ ազգ իր իրաւունքներուն կրնայ տիրանալ աշխարհաքաղաքական փոփոխութիւններուն յարմարելով կամ զիջումներով խաղաղութիւն մուրաւով:

Անոնք յանդգնութիւնը ունեցան իրենց գարուն կեանքին գնով միջազգայնացնելու Յայ Դատը, անտարբեր աշխարհին պարտադրելու վերաբանալ հայկական պահանջատիրութեան թղթածրարներն ու մշտապէս իրենց քաղաքական օրակարգին վրայ պահել 1915-ին տեղի ունեցած Յայոց Ցեղասպանութիւնն ու պատմական իր հայրենիքէն վտարանդի դարձած ազգի մը դատը:

Իսկապէս ալ ուժական պայքարին հետ Յայ Դատը միջազգայնացաւ, բազմաթիւ երկիրներու խորհրդարաններ ճանչցան ու դատապարտեցին Յայոց Ցեղասպանութիւնն ու գարթնեցաւ հայ ժողովուրդի ազատագրական պայքարի ոգին Սփիւռքէն Յայաստան ու Արցախ:

Լիզպոնի հինգ հերոսները ո՛չ մարդասպաններ էին, ոչ ալ կեանքին հրաժեշտ տուող յուսահատներ: Անոնք կը հաւատային որ պիտի յաջողին միջազգայնացնել իրենց ազգին ու ժողովուրդին դատը, առանց վայրկեան միսկ տատամսելու, առանց յանձնուելու կամ զիջելու:

Այսպիսի հաւատքով կերտուած էին դաշնակցական երիտասարդները, որոնք ըլլալով շառաւիղները ցեղասպանութեան ճողոպրած ու հայրենագուրկ դարձած սերունդի մը, լուռ չէին կրնար մնալ միջազգային անտարբերութեան, Թուրքիոյ ուրացման քաղաքականութեան դիմաց ու պատրաստ էին պատուհասը դառնալ իրենց ոսոխին՝ յանուն արդարութեան վերականգնումին:

Անոնք ազգի ու հայրենիքի փրկութեան նպատակաւ պայքարի ճամբան ընտրած էին ու քաջ գիտէին, որ այդ ճամբան երկար է ու փշոտ, սակայն հարթ կրնայ դառնալ եթէ հայ երիտասարդութեան միտքն ու բազուկը հաւասարակշռուած կշռոյթով գործեն՝ առանց տարուելու գերպետութիւններու նենգ խաղերով, խաբեպատիր խոստումներով ու կաշառքներով:

Լիզպոնի հինգ երիտասարդները մերժեցին ստրկութիւնը, իմաստաւորեցին մեր ազգին պայքարը, եւ ստեղծեցին այդ տարիներու իրենց սեփական գէնքը:

Աշխարհաքաղաքական փոփոխութիւններու եւ մեծ պետութիւններու հակադրուող շահերու լոյսին տակ, այսօր, Լիզպոնի գործողութեան 40-ամեակը արժանապատիւ ապրելու եւ հայրենիքի փրկութեան համար ազգիս իրաւունքները ուրացողներուն, թէ խլողներուն դիմաց նուաստացման բոլոր դրոսեւորումներէն զերծ մնալով արժանապատիւ պայքար մղելու ահագանգը կը հնչեցնէ:

Լիզպոնը հայրենիքի ամենափոքր բեկորին իսկ խիզախօրէն տիրութիւն ընելու ամենէն յստակ ու յանդուգն կոչն է նաեւ: Արան, Սագօն, Սեդրաքը, Սիմոնն ու Վաչէն անկախ Յայաստանն ու Արցախը տեսնելու առիթ չունեցան, բայց հաւատացին այդ օրուան ու դաշնակցականի այդ հաւատքն էր, որ ճեղքեց լռութեան պատը ու միջազգայնացուց Յայ Դատը, որպէս ամբողջական պայքարի մէկ օղակը:

«Գ.»

-Սուրիոյ Խորհրդարանի նախագահ Յամմուտա Սապպադի նախագահութեամբ եւ Սուրիոյ վարչապետ Յուսէյն Արնուսի եւ նախարարներու ներկայութեամբ, Սուրիոյ Խորհրդարանը արտակարգ նիստ մը գումարեց, քննարկելու ԱՄՆ տուարին դիմաց սուրիական լիբանոնական անկայունութեան ու Սուրիոյ տնտեսական եւ բնակչութեան կենցաղային հարցերը:



Նիստին ընթացքին որոշուեցաւ Խորհրդարանի անդամներէն եւ Սուրիոյ կառավարութեան Տնտեսական Յանձնախումբի անդամներէն բաղկացած միացեալ յանձնախումբ մը յառաջացնել: Անոր պարտականութիւնը պիտի ըլլայ գործնական եւ կառուցողական առաջարկներու շարք մը պատրաստել՝ Սուրիոյ տնտեսական, կենցաղային եւ ֆինանսական իրավիճակը բարելաւելու, սուրիական լիբանոնական փոխարժէքը կայուն պահելու եւ կառավարական պաշտօնեաներուն ամսականները բարելաւելու համար:


-Սուրիոյ մայրաքաղաքին մէջ տեղի ունեցաւ իմարաթեան օժանդակութիւններու համակարգումի գրասենեակին բացումը: Արաբական Միացեալ Էմիրութիւններու արտաքին գործոց նախարարի միջազգային կազմակերպութիւններու առնչուող հարցերու օգնական Սուլթան Շամի-սի գրասենեակին բացումը կատարեց Դամասկոսի մէջ իմարաթեան դեսպանատան յարկէն ներս, ներկայութեամբ Սուրիոյ արտաքին գործոց նախարարի ներկայացուցիչ Մահմատիէ Նասասնին:



-Սապպադ ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի Սուրիոյ քաղաքական եւ մարդկային հարցերու շուրջ յատուկ նիստին ընթացքին յայտնեց, որ Սուրիոյ մէջ մարդկային իրավիճակի բարելաւումը կը պահանջէ մնայուն լուծումներ, տեղահանուածներու տունդարձի ապահովում, յատկապէս Սուրիոյ ժողովուրդին դէմ ի գործ դրուած տնտեսական պատժամիջոցներու չեղեալ համարում: Սապպադ մտահոգութիւն յայտնեց նաեւ թրքական ուժերուն եւ անոնց ենթակայ գիւտեալ ահաբեկչական խմբաւորումներուն կողմէ «Ալուք» ջրամուղ կայանի ըմպելի ջուրին Թուրքիոյ ենթակայ խմբաւորումներու կողմէ փակման եւ Յասիջէի մէջ շուրջ մէկուկէս միլիոն քաղաքացիի ջուրէ զրկուած մնալուն գծով, սոյն արարքը պատերազմական եւ մարդկութեան դէմ ոճիր համարելով, յատկապէս Սուրիոյ մէջ ամրան եղանակին բարձր ջերմաստիճանը նկատի ունենալով: Սապպադ ակեցուց, որ Սուրիա ՄԱԿ-ի հաստատութիւններէն կը պահանջէ անմիջապէս կասեցնել այս անմարդկային արարքը եւ «Ալուք» ջրամուղ կայանին ջուրը հասանելի դարձնել Յասիջէի ժողովուրդին:



-Սուրիոյ երկրաշարժներու ազգային կեդրոնը հաղորդեց, որ 25 Յուլիսի առաւօտեան ժամը 8:44-ին, Ատանայի հիւսիսը՝ 70 քմ. հեռաւորութեան վրայ, 5.2 ռիխթըրը ուժգնութեամբ երկրաշարժ մը գրանցուեցաւ:



Երկրաշարժը զգալի դարձաւ նաեւ Սուրիոյ հիւսիսային սահանգներուն մէջ: Կեդրոնին համաձայն, առաւօտեան վաղ ժամերուն 3 ռիխթըրը ուժգնութեամբ երկրաշարժ մը գրանցուած է նաեւ Ադըքսանտրէթի ծովափին, իսկ 3.2 ռիխթըր՝ Թուրքիոյ հարաւային շրջանը:

-Լաթաքիոյ գիւղատնտեսութեան գրասենեակի տնօրէն երկրչփ. Պատմ Տուպա յայտնեց, որ հրշէջներու խումբերը կը շարունակեն Լաթաքիոյ հիւսիսային արուարձանին մէջ 25 Յուլիսին բռնկած հրդեհներու շիջանման աշխատանքը: Անոր համաձայն, խումբերը յաջողած են շիջանել արեւմուտեան եւ հարաւային հատուածներու հրդեհները, մինչդէռ արեւելեան եւ հիւսիսային հատուածներուն մէջ աշխատանքը կը շարունակուի:



Յիշեցնենք, որ 25 Յուլիսի երեկոյեան Լաթաքիոյ հիւսիսային արուարձանին մէջ հրդեհ մը բռնկեցաւ: Յրշէջները անմիջապէս փութացին հրդեհի վայր ու սուրիական բանակի միաւորներուն եւ տեղւոյն բնակիչներու օժանդակութեամբ շրջապատեցին կրակն ու շիջանեցին հրդեհը:



# Լուրեր Հայաշխարհին

## ԻՇԽԱՆ ՍԱՐԳՍԻԱՆ. «ՊԵՏԵ Ե ՌՈՂՈՒԻՆ ԴԵՊՐՆԱՆ» «ՃԱՆԱԴՈՒՄ ՅԱՆՈՒՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ» ՃԱՄԲԱՆ»

20 Յուլիսին Վիեննայի մեջ Հայաստանի պահանջով հրապարակված ԵԱՀԿ յատուկ մշտական խորհուրդի նիստին ՀՀ արտաքին գործոց



նախարար Արարատ Միրզոյեան յայտարարած է, որ մենք պատրաստ ենք ճանաչելու Ատրպեյճանի 86.600 քրք տարածքը, որ կը ներառէ Լեռնային Ղարաբաղը: Ապա անելուցած է, որ Հայաստանի իշխանութիւնը պատրաստ է այդ քայլին, եթէ Լեռնային Ղարաբաղի հայերուն իրաւունքներու եւ անվտանգութեան հարցը քննարկուի միջազգային ձեւաչափով՝ Ստեփանակերտ-Պաքու երկխօսութեան միջոցով:

168 TV-ի «Ռեվիու» հաղորդաշարի եթերին, խօսելով Արցախը Ատրպեյճանի մաս հռչակող հերթական յայտարարութեան մասին, ՀՀ Գերատեսչի Վերագոյն մարմնի ներկայացուցիչ, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր իշխան Սաղաթէլեան շեշտեց՝ Արցախի ինքնորոշման իրաւունքէն հրաժարելէն վերջ 120 հազար հայու որեւէ իրաւունք չէ գործած:

«Պիտի չգործէ, որովհետեւ, երբ դու երկու կողմէն ստեղծուիս կը յայտարարես, որ պատրաստ ես ճանաչելու Արցախը Ատրպեյճանի կազմին մէջ, անկէ վերջ ամէն բան կ'աւարտի. բանակցութիւնները կ'աւարտին», ըսաւ իշխան Սաղաթէլեան՝ ընդգծելով, որ Հայաստան պետք է ամբողջութեամբ փոխէ բանակցային տրամաբանութիւնը եւ երթայ այլ ճանապարհով:

«Պետք է ուղղուիլ դէպի՝ «Ճանաչում յանուն փրկութեան» ճամբան», ըսաւ ՀՀ Գերագոյն Մարմնի ներկայացուցիչը:

Սաղաթէլեանի համաձայն, քանի տակաւին Հայաստանի իշխանութեան ղեկին Նիկոլ Փաշինեանն է, ան իր խումբով պիտի բերէ եւ՝ պատերազմ, եւ՝ յանձնողականութիւն, ուստի ստեղծուած վիճակին մէջ անհրաժեշտ է ընդդիմութեան լայն դաշտ՝ իշխանութիւնը հեռացնելու յստակ օրակարգով:

«Մշտապէս այն կարծիքին եմ, որ Նիկոլն ու Ալիեւը հայ ժողովուրդին պիտի յաղթեն միայն այն պարագային, երբ անոնց դէմ պայքար չըլլայ», ըսաւ Սաղաթէլեան՝ ընդգծելով, որ իրենք պիտի շարունակեն պայքարը, եւ յառաջիկային նախատեսուած են ցոյցեր եւ փողոցային

պայքար, որ դադարած է 6 ամիսէ ի վեր:

«Այս ամիսներու ընթացքին դատարկ երկար ժամանակ չեն մնար, - ըսաւ իշխան Սաղաթէլեան՝ շարունակելով, - ժողովուրդին ապստամբութեան պատրաստելը մեր օրակարգին վրայ է պէտք է պատրաստուիլ, որովհետեւ կայ ընդամենը մէկ ճանապարհ՝ ատիկա համաժողովրդական ընդվզումն է՝ ամենակոշտ ձեւերով եւ միջոցներով: Պետք է գիտակցիլ, որ մենք գերութեան մէջ ենք: Հայաստանի այս իշխանութիւնը գերեզմարած է մեր ժողովուրդը, Արցախի 120 հազար հայը սովի եզրին է անձամբ Նիկոլ Փաշինեանի եւ ԶՊ-ական այս վարչախումբի գործունեութեան հետեւանքով»:

## Արցախի Ազգային ժողովը կը դիմէ Հայաստանի Հանրապետութեան

21 Յուլիսին, Արցախի Ազգային ժողովը կողով դիմեց Հայաստանի Հանրապետութեան միջոցներու ձեռնարկելու՝ խթանելու Արցախի ժողովուրդի արժանապատիւ կեանքին ապահովումը:



Արցախի խորհրդարանականները, մասնաւորապէս, կոչ ուղղեցին Երեւանին՝ անյապաղ միջոցներու ձեռնարկելու՝ Արցախի մէջ տեղական ինքնապահպանութեան միջազգային լիազօրութեամբ օժտելու համար, սահմանուած ընթացակարգով դիմելու ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդին եւ Ընդհանուր ժողովին՝ առաջարկելով պատշաճ քայլեր կատարել շրջանին մէջ խաղաղութեան եւ անվտանգութեան պահպանման ուղղութեամբ, իսկ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի մասուն անդամ-երկիրներուն՝ ընդունելու պարտադիր բնոյթի որոշում (բանաձեւ)՝ ձեռնարկելով եւ սահմանելով Արցախի մէջ խաղաղութիւն պարտադրելու գործուն միջոցներ:

«Արցախի Հանրապետութիւնը յանձնառու է փրկելու իր ժողովուրդը պատերազմի արհաւիրքէն, վերահաստատելու հաւատքը մարդու հիմնարար իրաւունքներուն եւ ազատութիւններուն, ինչպէս նաեւ մեծ ու փոքր ազգերու հաւասար իրաւունքներուն նկատմամբ, ուստի այդ կառոյցներէն կ'ակնկալէ ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կ'ապահովեն միջազգային իրաւունքի կանոններէն բխող պարտաւորութիւններու հանդէպ յարգանքը, ազատութեան պայմաններուն մէջ խթանել Արցախի ժողովուրդի արժանապատիւ կեանքի ապահովումը», ըսուած է յայտարարութեան մէջ:

## ՌՈՒՍԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ. «ՎՍԿՆԿԱԼԵՆՔ, ՈՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՍՏՈՐԱԳՐՈՒՄԸ ԲԱՆԱԿՅԱՅԻՆ ՄԵԾ ԳՈՐԾԵՆԹԱՅԻ ԳԱԳԱԹՆԱԿԵՏԸ ԿԸ ԴԱՌՆԱՅ»



Մոսկուայի մէջ աւարտին հասաւ Հայաստանի արտաքին գործոց նախարար (այսուհետեւ՝ ԱԳ) Արարատ Միրզոյեանի, Ռուսիոյ ԱԳ նախարար Սերկեյ Լաւրովի եւ Ատրպեյճանի ԱԳ նախարար Ժէյհուն Պայրամովի եռակողմ հանդիպումը:

Բանակցութիւններուն նիւթը Հայաստան-Ատրպեյճան յարաբերութիւններու կարգաւորումը եղած է:

«Այսօր օգտակար բանակցութիւններ վարեցինք մեր գործընկերներուն՝ Ատրպեյճանի արտաքին գործոց նախարար Ժէյհուն Պայրամովի եւ Հայաստանի արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեանի հետ», եռակողմ բանակցութիւնները մեկնաբանելով ըսած է Ռուսիոյ ԱԳ նախարար Սերկեյ Լաւրով:

«Մենք մեր գրուցակիցներուն ուրուագծեցինք ռուսական կողմին գնահատականները՝ նկատի առնելով Լեռնային Ղարաբաղի մէջ ռուս խաղաղապահներուն կողմէ հասած հարդրումները, այն քայլերուն մասին, զորս ցանկալի է անյապաղ ձեռնարկել՝ մեկնելով Ղարաբաղի

ընկերութեան սնունդով, դեղորայքով, առաջին անհրաժեշտութեան ապրանքներով, անխափան ելեկտրային ջերմուժով եւ կազամատակարարումով ապահովելու շահերէն: Ասիկա կը բխի հասարակ մարդոց, հայերուն, տարածաշրջանի բնակիչներուն շահերէն», ըսած է ան:

Լաւրով յայտնած է, որ Ռուսիա, որպէս խաղաղ գործընթացի առանցքային միջնորդ շահագրգռուած է ճգնաժամափշուտափոխի հանգուցալուծմամբ՝ Ռուսիոյ, Ատրպեյճանի եւ Հայաստանի ղեկավարներուն կողմէ 2020, 2021 եւ 2022 թուականներուն ընդունուած եռակողմ յայտարարութիւններուն համապատասխան (1, 2, 3, 4):

Ապա անելուցած է, որ Հայաստանի, Ռուսիոյ եւ Ատրպեյճանի արտաքին գործոց նախարարները անդրադարձած են նաեւ 2020-ի եռակողմ յայտարարութեան մէջ հաղորդակցական միջոցներու ապաշրջափակման դրոյթին:

Ըստ Լաւրովի, հանդիպումին առանձնայատուկ ուշադրութեան առարկայ դարձած են սահմանազատման հարցերը, որոնք «սերտօրէն կապուած են քննարկուող հարցերու ամբողջ շարքին հետ, ինչպէս նաեւ Պաքուի եւ Երեւանի միջեւ ըստ կարելւոյն շուտ խաղաղութեան պայմանագրութիւն կնքելու հարցերուն»:

«Մենք կ'ակնկալենք, որ այս պայմանագրութեան ստորագրումը կը դառնայ բանակցային մեծ գործընթացի գագաթնակէտը, որը կ'աւարտի հայերու եւ ատրպեյճանցիներու ջանքերուն ներքեւ, որոնք նախաձեռնուած են Ռուսիոյ Ղաշնութեան նախագահ Վլատիմիր Փութինի հետ եռակողմ հանդիպումներու ընթացքին: Ծամբան դիւրին չէ: Բազմաթիւ բարդ ու կարեւոր խընդիրներ կան լուծելու: Անոնցմէ ամենազգայունը եղած է եւ կը մնայ Լեռնային Ղարաբաղի հայերու իրաւունքներուն եւ անվտանգութեան երաշխաւորման հարցը՝ Ատրպեյճանի տարածքային ամբողջականութեան ապահովման համատեքստին մէջ՝ 1991 թուականի Ամսաթայի մէջ Նախկին խորհրդային հանրապետութիւններու ղեկավարներու կողմէ ստորագրուած հռչակագիրին համաձայն: Անոր արդիւնաւետութիւնը այսօր հաստատուած է ինչպէս Ատրպեյճանի, այնպէս ալ Հայաստանի ղեկավարութեան կողմէ: Անոր համապատասխան, կը կառուցուի խաղաղութեան պայմանագրութեան վրայ աշխատանքը», յայտնած է ան:

Լաւրովի խօսքով՝ ատրպեյճանական կողմը «պատրաստ է փոխադարձ հիմունքներով նոյն երաշխիքները տրամադրել իր տարածքին մէջ ապրող անձանց նկատմամբ, հայերը պատրաստ են նոյնը ընել Հայաստանի Հանրապետութեան մէջ բնակող քաղաքացիներուն նկատմամբ բոլոր համաձայնութիւններու կիրառման հարցով»:



## ՆՍՕՏՏ Արամ Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսին Հայրապետական Սրբաբառ Կոնդակը՝ Սուրբ Ներսէս Դ. Շնորհալի Հայրապետի Վախճանման 850-Ամեակին Առիթով

### ԱՐԱՄ

ԾԱՌԱՅՅ ՅԻՍՈՒՄԻ ԲՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՏԱՄԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ  
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՄԲ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՊԵՏ  
ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆԱՅՈՅ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ՇՆՈՐՀՔ, ՍԵՐ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ Ի ՏԵԱՆՆԷ ԵՒ ՈՂՋՈՅՆ  
ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ի ՄԵՆՋ ԵՒ ՕՐՆՆՈՒԹԻՒՆ ՅԱԶՈՅ ՍՐԲՈՅ  
ՆՕՐՆ ՄԵՐՈՅ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ

ԹԵՄԱԿԱՆ ՍՐԲԱԶԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ  
ԵՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՅ, ՎԱՐԿԱՊԵՏԱՅ ԵՒ ԲԱՆԱՆԱՅԻՅ,  
ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՆԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ, ԱԶԳԱՅԻՆ  
ԿԵՂԻՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ, ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ,  
ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ, ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՒ ԹԵՄԱԿԱՆ  
ԺՈՂՈՎՈՅ, ԹԱՂԱԿԱՆՈՒԹԵԱՆՅ ԵՒ ՆՈԳԱԲԱՐՉՈՒԹԵԱՆՅ,  
ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆՅ ԵՒ ԾԱՌԱՅԻՅ ՆԱՅ  
ԴՊՐՈՒԹԵԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿ ՈՒՍՈՒՅՉԱՅ ԵՒ ՄԱՍԼՈՅ  
ՄՊԱՍԱՒՈՐԱՅ, ԵՒ ՆԱՄՕՐԸՆ ՆԱԲԱՏԱՅԵԱՆ ՆԱՐԱԶԱՏԱՅ  
ՄԵՐՈՅ ՆԱՅԿԱԶՆԵԱՆ ԱԶԳԻ ՈՐ Ի ՍՓԻՒՈՍ ԱՇԽԱՐՀԻ,  
ԲՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՄԵՐՈՅ ԵՒ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՂՋՈՅՆ Ի  
ՄԵՆՋ ԵՒ ՕՐՆՆՈՒԹԻՒՆ ՅԱԶՈՅ ՍՐԲՈՅ ՆՕՐՆ ՄԵՐՈՅ  
ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ: ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՆՕՐ ԱՍՏՈՒԾՈՅ,  
ՍԵՐ ՈՐԴԻՈՅՆ ՄԻԱԾՆԻ ԵՒ ՇՆՈՐՀՔ ՆՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ  
ԵՂԻՅԻՆ ԸՆԴ ՉԵՁ ԸՆԴ ԱՄԵՆԵՍԵԱՆԴ. ԱՄԵՆ:

Ներկայ տարին Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետին վախճանման 850-ամեակն է: Իր հարուստ իրազործումներով եւ հոգեմտաւոր մեծ վաստակով Սուրբ Ներսէս Շնորհալին եղած է հայ եկեղեցւոյ մեծագոյն ու բազմաշնորհ հայրապետներէն մէկը: Իր եզակի արժանիքներով, Շնորհալին առանցքային ներկայութիւն դարձած է յատկապէս մեր եկեղեցւոյ ծիսական, աստուածաբանական, դաւանաբանական, միջ-եկեղեցական ու երաժշտական մարզերէն, եւ ընդհանրապէս, հայ մշակոյթի անդամատանէն ներս: Ծանօթ են մեզի իր հոգեւոր ստեղծագործութիւնները՝ աղօթքներ, հոգեւոր բանաստեղծութիւններ, քառեակներ, առակներ, հանելուկներ ու մեկնողական գործեր: Ծանօթ են մեզի իր յօրինած բազմաթիւ ու բազմերանգ երաժշտական կտորները՝ մեղեդիներ, տաղեր, գանձեր ու շարականներ: Տակաւին ծանօթ են մեզի հայ եկեղեցւոյ աստուածաբանական, ծիսական ու դաւանաբանական ուսուցումները ու տեսակետները պարզող իր նամակները ու հաւատոյ գիրքը: Հոգեմտաւոր հսկայ հարստութիւն մը ժառանգած է մեր եկեղեցին Սուրբ Ներսէս Շնորհալիէն. անկրկնելի ժառանգ մը, որ իր կարեւորութիւնը, իւրայատկութիւնն ու թարմութիւնը կը շարունակէ պահել մինչեւ մեր օրերը:

Սուրբ Ներսէս Շնորհալին մեր պատմութեան այն բացառիկ հոգեւորականներէն մէկն է, որ իր սրբակենցաղ կեանքով ու հայ եկեղեցւոյ առաքելութեան ամբողջական նուիրումով, նոյնիսկ իր կենդանութեան մեր ժողովուրդին կողմէ «Սուրբ» որակուած է: Բազմավաստակ Հայրապետին տրուած է «Շնորհալի» կոչումը, ո՛չ միայն իր ստեղծագործական վաստակի քանակին ու տեսակին, այլ մանաւանդ որակին համար: Ան եղած է մեր եկեղեցւոյ ծեսը հարստացնողը, ժողովրդականացնողը ու արդիականացնողը: Եղած է եկեղեցիներու բաժանման հիմնական պատճառ դարձած քրիստոսաբանական հարցերու շուրջ մեր եկեղեցւոյ դաւանաբանական կեցուածքը պարզողը ու պարզաբանողը: Եղած է նախարարական տոհմերու միջեւ յառաջացած հակամարտութիւններու լուծման կարեւոր նպաստ բերողը: Տակաւին Շնորհալին եղած է Յոյն, Լատին եւ Ասորի եկեղեցիներուն եւ հայ եկեղեցւոյ միջեւ յարաբերութիւնները ծաւալող հոգեւորականը:

Կիլիկեան աշխարհի քաղաքական ու կրօնական դժուար պայմաններու մէջ ծառայած է Շնորհալին: Սակայն, շնորհիւ իր գործը հաւատքին, ճկուն քաղաքականութեան, նուիրեալ ծառայութեան ու օրինակելի լայնախոհութեան, կրցած է բերել պահել մեր ժողովուրդի ինքնութիւնը, ամուր՝ միասնականութիւնը եւ պայծառ՝ մեր եկեղեցւոյ դիմագիծը:

Այսօր, երբ մեր եկեղեցւոյ գաւազները եկեղեցի յաճախեն, հաղորդակից կը դառնան Շնորհալի «Յիշեսցուք», «Չարթիք, Որդիք Լուսոյ», «Առաւօտ Լուսոյ», «Հաւատով խոստովանիմ» եւ այլ բազմաթիւ հոգեզմայլ երաժշտութեան ու աղօթքներուն: Երբ հոգեւորականը հայ եկեղեցւոյ աստուածաբանական ու դաւանաբանական տեսակետները կ'ուզէ ուսումնասիրել, կը դիմէ Շնորհալիին: Երբ բանասերը կ'ուզէ իրագրել դառնալ Կիլիկեան «Արծաթե Դար»-ու մատենագրութեան ու ընդհանրապէս հայ մշակոյթի իւրայատկութիւններուն, կը դառնայ Շնորհալիին:

Կիլիկիոյ մէջ ապրած, ծառայած ու ստեղծագործած մեծանուն Հայրա-

պետը յատուկ կարեւորութիւն կը ներկայացնէ մասնաւորաբար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար, յատկապէս հետեւեալ պատճառներով.-

- 1) Միջ-եկեղեցական յարաբերութիւններու գծով մեր Սուրբ Աթոռին ունեցած յատուկ հետաքրքրութիւնը, առանց հեռանալու եկեղեցիներու միութեան նկատմամբ մեր եկեղեցւոյ սկզբունքէն, կը պարտինք Շնորհալիին:
- 2) Քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան գծով մեր Սուրբ Աթոռին վաստակած հարուստ փորձառութիւնը, միշտ կանչած մնալով քրիստոնեական



սկզբունքներուն, դարձեալ կը պարտինք Կիլիկիոյ բազմամշակոյթ, բազմակրօն ու բազմացեղ պայմաններու մէջ գործած ու ստեղծագործած Շնորհալի Հայրապետին:

Յարաբերաբար կարճ եղած են Ներսէս Շնորհալիին երկրաւոր կեանքին տարիները, սակայն անմահանուն Հայրապետը իր կեանքը հարստացուցած է իր ժամանակը անդրանցնող անկրկնելի ստեղծագործութիւններով ու բազմերանգ իրազործումներով: Շնորհալին իր անշնչելի դրոշմը ձգած է մեր ազգին ու եկեղեցւոյ պատմութեան վրայ, դառնալով մեր կեանքի երկնականմարին վրայ փայլող անմար աստղերէն մէկը:

Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետին վախճանման 850-ամեակը յիշեցում մըն է մեզի, մեծ Հայրապետին հիասքանչ վաստակը արժանի վեհութեամբ ու շքեղութեամբ արժեւորելու մեր հաւաքական կեանքէն ներս, անոր անձէն ու գործէն ճառագայթող հաւատքով ու շնորհներով շաղախելով մեր համայնական ու անհատական կեանքը: Այս սպասումէն մեկնած, կը թելադրենք՝

- ա) Մեր թեմերուն՝ յատուկ նախաձեռնութիւններու ճամբով արժանավայել կերպով նշելու յիշեալ կարեւոր յոբելեանը:
- բ) Մեր հոգեւոր հայրերուն՝ մօտէն հաղորդ դառնալու Շնորհալի դաւանաբանական ու միջ-եկեղեցական տեսակետներուն, եւ շէշտելու անոց կարեւորութիւնը, յատկապէս միջ-եկեղեցական շրջանակներէն ներս:
- գ) Մեր մտաւորականներուն՝ լուսարձակի տակ բերելու բանասիրական ու գրական յատուկ կարեւորութիւն ներկայացնող Շնորհալի հարուստ գրիչին արգասիքը:

Մեր ջերմ մաղթանքն է, որ հայ եկեղեցւոյ ծեսին ու առաքելութեան ժողովրդականացման իր կարեւոր ներդրումը բերած Սուրբ Ներսէս Շնորհալի վախճանման 850-ամեակի նշումը մեր եկեղեցւոյ համար դառնայ վերանորոգման առիթ ու մարտահրաւիր:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Սուրբ Ներսէս Շնորհալի Հայրապետի բարեխօսութեամբ պահէ ու պահպանէ մեր ազգը, հզօրացնէ մեր հայրենիքը եւ պայծառացնէ մեր եկեղեցին իր հաւատքի առաքելութեամբ ու ազգանուէր ծառայութեամբ:

Հայրապետական օրհնութեամբ եւ հայրական ջերմ սիրով  
**Աղօթարար՝  
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**



## ԼՈՒԹԵԱՆ ԶԱՅՆԸ ԽՉՈՂ ՈՒԺԱՆԱԿԻ ԴՂՐԴԻՒՆԸ



Գրիգոր Տունկյան

Ինչպես հայոց պատմությունը, այնպես ալ Լիզպոնը՝ հայկական պահանջատիրության լուսնային, որ այսօր չորս տասնամյակ է ետք հայ ինքնության ակունքներն մատակարարում է աւիշով մեր հոգիները կը սնուցանէ: Լիզպոնը խիզախում է հայու արժանապատուութեան: Լիզպոնի անհրաժեշտ արժեքամակարդը ուղեկիշ դարձաւ հայ երիտասարդութեան:

Հայոց պատմութեան էջերը լի են հազարամեակներու ընթացքին հայու գոյերթի բազում իրադարձութիւններով եւ զանոնք իրականացնող տիտաններուն անհրաժեշտ պատմութեամբ:

Այսպիսիք են՝ Հայկի եւ Բելի դիւցազնապատումը, Սասունցի Դաւիթն ու Առիւծ Միտը, արքայից արքայ Տիգրան Բ.-ը եւ ծովից ծով

ունենալ:

Այդ պատումներուն վրայ աւելցնենք՝ 1991-ին Հայաստանի Հանրապետութեան վերանկախացումը, արցախեան գոյապայքարի ծնունդն ու զարգացումը, Ստեփանակերտէն բարձրացած եւ Երեւանի մէջ արձագանգած «Միացում-Միացում» պահանջը, Արցախի անկախ հանրապետութեան հռչակումը:

Թէեւ վերոյիշեալներէն իւրաքանչիւրը իր ժամանակին արտայայտիչն է, սակայն անոնք միասնաբար, որպէս մէկ ամբողջութիւն, կը կազմեն մեր հաւաքական յիշողութիւնը, որ հիմնական շարժախն է հայ ինքնութեան:

Յեղասպանութենէն դար մը ետք կարելի է հաստատել, որ միանուագ ու հեզասահ չընթացաւ

շրջանները կազմալուծելու համար գործադրուած ճիգերը, ազգային նշանակալից կառոյցներուն եւ հայ ազգայնականութեան գաղափարի դրօշակիրներուն դէմ՝ պետական ահաբեկչութեան կիրարկումն ու ֆիզիքական չեզոքացման գործադրումը, որուն զոհ դարձան հայ քաղաքական մտքի արժանաւոր ռահ-վիրաներ:

Ազգային Ազատագրական պայքարի նկրտումները եւ մարտնչումները միջազգային ահաբեկչութեամբ պիտակաւորող մեծապետական երկիրներու քաղաքականութիւնը:

Յեղասպանութեան յիսնամեակին Երեւանէն եւ սփիւռքէն բոլոր փապուղիներէն բարձրաձայնուած «ՄԵՐ ՀՈՂԵՐԸ, ՄԵՐ ՀՈՂԵՐԸ» պահանջը թէեւ հանդիպած էր աշխարհի խցուած ականջներուն, սակայն իրողապէս պահանջատիրութեան նոր փուլ մը թեւակոխելու անխուսափելիութիւնը յուշած էր բոլորին:

Ժամանակի թաւալումով, պահանջատիրութեան խամրումի սին պատրանքը սնուցանողները ակա-նատես եղան:

1975-1985 տասնամեակէն սկսեալ պահանջատիր հայու նոր ու աւելի վճռակամ տեսակի մը, որ նոր ոճ տուաւ պայքարին: Նոր փուլ մը սկսած էր հայկական պահանջատիրութեան հողովոյթին մէջ:

Երիտասարդութիւնը ստանձնած էր իրեն փոխանցուած անհնդը եւ ըմբռնած էր «քաղաքակիրթ մարդկային իրանունքներու պաշտպան» ներկայացողներու համաշխարհային լեզուն:

Աշխարհով մէկ բազմապատու-կուած էին պահանջատիրութեան արտերը քարոզչական, յարաբերական եւ ցուցական ներդաշնակ աշխատանքի ընդարձակ դաշտով, յա-նուն արդարութեան վերականգնումին եւ բռնազրուած իրաւունք-ներու վերատիրացումին: Ի հարկին կը դիմուէր նաեւ գիտելի պայքարի:

Այս փուլի գլխաւոր դժուարութիւնը կը համարուէր ազգային քաղաքական դատ հետապնդող մարտիկն ու անդազգեան ահաբեկիչը գատորոշելու հիմնախնդիրը:

Այստեղ կ'արժէ անդրադառնալ նշանակալից մեկնութեան մը՝ պարզելու համար որ թէեւ հազուադէպօրէն, սակայն երբեմն նաեւ զըտ-նուած են իրերը իրենց անուններով կոչող քաղաքական այրեր, ճիշդ հասկցուած ըլլալու թելուգ փոքրիկ դրական լիքը ներշնչելով:

7 Յունիս 1982-ին, երբ Լիզպոնի մէջ «ՀՅԱ Մարտիկներ»-ուն կողմէ քաղաքական ահաբեկման կ'ենթարկուէր Թուրքիոյ Դեսպանութեան վարչական կցորդը, Փորթու-քալի ներքին գործոց նախարար Ան-ժելօ Կորէեան խորապէս ցաւ յայտ-նելով տեղի ունեցածին համար կը յայտարարէր, որ այսչին նշանակէր, որ միջազգային ահաբեկչութիւնը ժամանած է Լիզպոն, որովհետեւ այս՝ որոշակի խումբի մը աշխատանքն է ճշդեալ թիրախի դէմ:

Այս հաստատումը կարելի է համարել յստակ գատորոշում ազգային ազատագրական պայքար եւ անդազգային ահաբեկչութիւն

հասկացութիւններուն միջեւ, որ բացայայտօրէն երեւան եկաւ Լիզպոնի անձնագրական արարքով:

Ամբողջ յիսնամեակ մը իր ականջները խցած ու պապանձած միջազգային լրատուամիջոցները շտապ եւ շատ կարեւոր գլխադիրով աշխարհին ծանուցեցին ՀՀ Բանա-կին հարդորդագրութիւնները:

Փորթուկալի իշխանութիւններուն եւ միջազգային հանրային կարծիքին ուղղուած ՀՀ-ի հրապարակած հարդորդագրութեան ընթերցումով կը վերապրինք ազատամարտիկներուն յանդուգն գործողութիւնը:

ՀՀ-ին փորթուկալեան իշխանութիւններուն ուղղած հարդորդագրութիւնը:

«Կոչ կ'ուղղենք փորթուկալեան իշխանութեանը բացատրելու եւ արդարացնելու մեր արարքը: Նայելու առաջ կը ցաւինք, որ կը բռնաբարենք ձեր երկրին օրէնքը եւ կը խանգարենք Փորթուկալի անդորրութիւնը: Չինեալ պայքարը իբրեւ դիմադրութիւն միջոց պարտադրուած էր մեզի: Մենք ուրիշ ընտրութիւն չունեինք:

Դեսպանատան գրաւումը արտայայտութիւնն է հայ երիտասարդութեան ընդվզումին, որ յոգնած ու ծանծրացած է գիւնք անտեսելու փորձերէն:

Այս կոչը կ'ուղղենք ձեզի եւ կ'ակնկալենք, որ մեզի հասկնաք, որովհետեւ մենք խոր յարգանք ունինք ձեր ազգին հանդէպ, որուն ներքին գործոց նախարարը մօտիկ անցեալին, ոչ միայն քաջ, այլեւ պարկէշտ եւ հասկցող մօտեցում ունեցաւ:

Այս պատճառով մենք Փորթուկալի իշխանութիւններէն կը խընդրենք, որ մեր ընկերներուն հետ իբրեւ ոճրագործներ չվարուին, այլ իբրեւ ազգային դատի գիւնդներ:

Մեր քաղաքական արարքը նպատակ ունի հարուածել թուրք պետութիւնը, որուն ներկայացուցիչները արտասահմանի մէջ կը հանդիսանան թրքական դիւանագիտական ներկայացուցչութիւններն ու հաստատութիւնները»:

Լիզպոնը անձնասպանական արարք էր, ոչ ալ յուսահատութեան արտայայտութիւն:

Սեդրաքը, Սիմոնը, Արան ու Վաչէն խաբանարար ահաբեկիչներ էին, այնպէս ինչպէս չարամտօրէն կ'ուզուի ներկայացնել, ոչ ալ՝ հոգեխռովներ: Անոնք սեփական հայրենիքէն արմատախիլ եղած ու ցեղասպանուած ժողովուրդի մը կրած տառապանքէն ծնունդ առած նուիրեալներ էին, որոնք իրաւագրկեալ ազգի իրաւունքներու ձեռքբերման համար մեռնաւոր էին մահուան դէմ, զայն անարգելով: Ամեն դիւցազուններ էին, որոնք գործեցին իրաւունքի ու ժողովուրդի հարազատ բարկութիւնն էին անոնք եւ իրենց իսկ գրուած դեսպանատան տարածքէն պահանջադիր մը ներկայացուցած էին թրքական կառավարութեան եւ խիզախօրէն յայտարարած թէ՛

«Հայ ժողովուրդի գաւակներն ենք մենք: Բրտութեան դիմելու մեր որոշումը արդիւնք է թրքական պե-



Հայաստանը, Տրդատ թագաւորն ու քրիստոնէութեան պետական կրօն հռչակումը, Աւարայրն ու Վարդանը, հայ գիրերու գիւտն ու ոսկեդարը: Աւելին. Օսմանեան տիրապետութեան ներքեւ գտնուող Արեւմտեան Հայաստանի հայկական նահանգներու իրավիճակի բարեկարգումներու պահանջներէն մինչեւ ազգային ազատագրական պայքարի ծնունդը, ազգի ծրագրուած ու գործադրուած տարագրումն ու ցեղասպանութիւնը կազմակերպողներու հատուցումը եւ հայկական հերոսամարտերը: Երեսնամեայ ազգային ազատագրական պայքարի պսակը հանդիսացող սարդարապատեան ծառացումը եւ 28 Մայիս 1918-ի հայկական անկախ պետութեան ստեղծումը, Միացեալ Հայաստանի գաղափարախօսութեան որդեգրումը, Հայաստանի խորհրդայնացումը, ապա՝ Փետրուարեան յաղթական ապստամբութիւնը, Գ. Նժդէին ու Լեռնահայաստանի անկախութեան հռչակումը, հայրենաբաղձութեան եօթանասուն տարիները, Սփիւռքի կազմակերպումը, ՀՀԴ Հայ Դատի յանձնախումբերու աշխատանքով հունաւորուած ազգային պահանջատիրութեան գաղափարախօսութեան ծաւալումը, քաղաքականացած բազմութիւններու ստեղծումը:

Իրավիճակ մը, որ Սփիւռք ունեցող քիչ ժողովուրդներ կրցան

հայկական պահանջատիրութիւնը: Բացասական ազդեցութիւն ունեցան՝

-Հայ ազգին Խորհրդային Հայաստանի եւ Սփիւռքի տարածքին գոյութեանական երկճիւղ իրավիճակը,

-Սփիւռքէն այլասերիչ պայմաններու, գաղափարախօսութիւններու եւ բարքերու ներգործութեամբ հայ ինքնութեան պահպանման դժուարութիւնները,

-Ներազգային ճակատի վրայ երբեմն ալ պահպանողական եւ կրաւորական մտայնութիւններու գերակշռումը,

-Թուրքիոյ կողմէ գործադրուած պետական ահաբեկչութիւնը,

-Թրքական Դիւանագիտական ներկայացուցչութիւններու ճամբով թուրք պետութեան գաղտնի սպասարկութիւններուն եւ անոնց գործակից դաւադիր ուժերուն կողմէ աշխարհով մէկ ծաւալած Հայոց Յեղասպանութեան ժխտման եւ անոր պատասխանատուութենէն խուսափման քաղաքականութիւնը, գոհը գոհարար ներկայացնելով ճշմարտութեան նենգափոխումը՝ համաշխարհային լրատուամիջոցներու կաշառուած մեղսակցութեամբ: Ինչպէս նաեւ յատկապէս Սփիւռքէն կազմակերպ եւ Թուրքիոյ համար առաջնային վտանգ նկատուող առաւել գործուն միջինարեւելեան

## ՆՍՕՏՏ ԱՐԱՄ...

Սկիզբ՝ էջ 1

Այս հանրահալածությունն իր Հայրապետական գորակցական պատգամը յղեց ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը: Ան իր պատգամը սկսաւ յատկապէս Արցախի եւ ընդհանրապէս մեր ժողովուրդին վստահեցնելով, որ մենք, որպէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, մեր Միաբանութեամբ, աշխարհասփիւռ թեմերով, կառոյցներով ու կազմակերպութիւններով, այլ խօսքով ողջ Սփիւռքը արցախահայութեան հետ է: Արցախը այսօր կ'ապրի մեր ժամանակակից պատմութեան ամենէն ճակատագրական օրերը: Այս կացութեան դիմաց մենք պետք է մեր հաւատքը ու կամքը աւելի ամրապնդենք եւ Արցախի ապագային նկատմամբ մեր տեսլականը պահենք միշտ պայծառ, ըսաւ Հայրապետը:

Շարունակելով իր խօսքը՝ Վեհափառ Հայրապետը շեշտեց, թէ անցեալին Արցախը մերը եղած է. այսօր Արցախը մերն է եւ վստահեցուց, որ Արցախը միշտ պիտի մնայ մերը, որովհետեւ մեր ողջ պատմութեան ընթացքին, արցախահայութիւնը եղած է Արցախի մէջ եւ իր քրտինքը միախառնած է Արցախի հողին:

Նորին Ս. Օծութիւնը կարեւորութեամբ շեշտեց հետեւեալ երեք կէտերը:-

ա) Պատմութիւնը կը վկայէ, որ Արցախը միշտ եղած է ինքնավար: Արցախի մեր ժողովուրդը եկուոր չէ՛: Ան ծնունդն է Արցախին: Պատմութեան ընթացքին Արցախը երբեք ենթակա չէ եղած այլ իշխանութիւններու, այլ եղած է ինքնավար. եւ չմոռնանք, երբ Սովետական Միութիւնը վերջ գտաւ, Արցախը պահեց ու այսօր եւս պետք է պահէ իր ինքնորոշման իրաւունքը:

բ) Միջազգային օրէնքներուն համաձայն, ժողովուրդն է իր ապագան ճշդողը: Ժողովուրդի մը ինքնիշխանութիւնը, ինքնավարութիւնը միջազգային օրէնքի եւ մարդկային իրաւունքներու ամենէն հիմնական սկզբունքներն են:

գ) Արցախը չի կրնար շրջանի համապարփակ, այսպէս կոչուած, խաղաղութեան գոհը դառնալ: Արցախի ինքնավարութեան իրաւունքը չի կրնար միջազգային դիւանագիտական սեղաններու շուրջ քննարկումի նիւթ դառնալ: Արցախը եղած է ինքնավար. այսօր է՛ ինքնավար եւ միշտ պիտի մնայ այդպիսին, որովհետեւ ա՛յս է Արցախի մեր ժողովուրդին կամքը եւ իրաւունքը: Ժողովուրդի մը ինքնորոշման իրաւունքը, ազատութիւնը նստուածատուր է եւ ո՛չ ոք իրաւունքը ունի գայն խլելու ժողովուրդի մը ձեռքէն:

Իր պատգամի աւարտին, Վեհափառ Հայրապետը արթնութեան ու զգաստութեան կոչ ուղղեց արցախահայութեան եւ ընդհանրապէս հայութեան. «*Չարթի՛ր, Արցախի ժողովուրդ, մի՛ վիհատիր, մի՛ նահանջեր, մեր ազգը ամբողջ քեզի հետ է՝ Հայաստան եւ Սփիւռք, որովհետեւ Արցախը մենք ենք, բոլորս: Արցախին իրաւունքը ողջ հայութեան իրաւունքն է եւ անոր պաշտ-*

*պանութիւնը իւրաքանչիւր հայու պարտաւորութիւնն է:*

*Չարթի՛ր, Արցախի ժողովուրդ, եղիր ամուր, եղիր միշտ հզօր, պատնէշի վրայ եւ եղիր քու իրաւունքներուդ, մեր ազգի իրաւունքներուն հզօր պահապանը ու պաշտպանը»:*

Հայրապետը իր պատգամը եզրափակեց աղօթք բարձրացնելով Ամենակալին, որ Արցախը իր երկնային հզօրութեամբ ու օրհնութեամբ միշտ պահէ հզօր ու անասաւ:

## ԼՈՒՌԹԵԱՆ...

Սկիզբ՝ էջ 5

*տութեան եւ անոր գորավիզ կանգնող ուժերու կողմէ հայ ժողովուրդի արդար պահանջները քննելու մերժումին:*

*Մենք կը մերժենք որեւէ ձեռի ուտիկանական միջամտութիւն, կամ դեսպանատուն ներթափանցելու որեւէ փորձ: Եթէ մեր պայսմանները անտեսուին, մենք ունինք բաւականաչափ պայթուցիկներ քանդելու համար ամբողջ շէնքը, մեզի հետ սպաննելով նաեւ պատանդները»:*

Անոնց ուժանակները ազգի խտացած ցասումն էին: Ներշնչարանը՝ գաղափարն էր լուսաճաճանչ, իսկ ազգին սերը՝ անոնց կու տարխոյանք՝ նուաճելու անառիկ կարծուած պատնէշները:

Կեսօրէ ետք արդէն հինգ մարտիկները ուղեւորուած էին յաւերժութեան:

Հայոց նորագոյն պատմութեան մէջ պահանջատեր ու վճռական հայու տեսակի արարման խորհրդանիշն է Լիզպոնի սխրանքը:

Զառասուն տարիներ ետք, Լիզպոնի խլացնող պատգամը կը թարմացնէ մեր հաւաքական յիշողութիւնը:

Սեդրաքը, Սիմոնը, Արան եւ Վաչէն Մասեաց քաջերուն միացած կը պատգամեն՝

- Մերժել անյուսութիւնը:
- Խիզախութեամբ եւ անձնուրացութեամբ ստեղծել հայու գոյերթի շարունակման կենսական ստորոգելիները:
- Մերժել կրաւորականութիւնը, որ գերեզմանն է պահանջատիրութեան:

- Միասնականութեան սրբազան փոթորկումով ցրել ազգի եւ հայրենիքի երկնակամարին կուտակուած մութ ամպերը:

Լիզպոնի սխրանքը խորհրդանիշը եղաւ իր ժամանակին, որովհետեւ ան հարազատ էր իր ժողովուրդի իտեալին: Ժամանակները անցան, բայց ան մնաց պահանջատիրութեան խորհրդանիշ, դարձաւ սերունդներու կամքի ներշնչարան:

Հայ հոգիներ այսօր ալ Լիզպոնով դարձեալ կ'առնեն խոյանք: Վեր կը բարձրանան ճահիճներէն մեղկութեան, ստրկացման: Կը ջրդեղուն կամքերը թուլացած, կը բոցավառին ազգային արժանապատուութեան կայծերը անթեղուած:

Լիզպոնեան պատարագէն քառասուն տարի ետք, այս օրերուն, հայ աշխարհի չորս ծագերուն, անոր արժանավայել յիշատակումը խօսուն վկայութիւնն է գայն ծնող գա-

ղափարի վեհութեան եւ հայ ինքնութեան վրայ ձգած դրոշմին անժամանցելիութեան:

## ՆԱԽԱԳԱՅ ԱՍՍՏ...

Սկիզբ՝ էջ 1

Իր կարգին Լաւրենթէ Նախագահ Ասատին փոխանցեց Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութինի ող-

ջոյնները, շեշտելով, որ Ռուսիա պիտի շարունակէ գորակցիլ Սուրիոյ, որպէսզի Սուրիոյ ժողովուրդին ապահովութիւնը ամրապնդէ: Ան յայտնեց, որ սուրիացի տեղահանուածներու տունդարձին գծով երկու երկիրներու գործակցութիւնը կը շարունակուի, շեշտելով, որ Սուրիա եւ Ռուսիա կառչած կը մնան այս հարցի մարդկային կողմին եւ կը մերժեն անոր քաղաքականացումը:

## ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ...

Սկիզբ՝ էջ 11

եան, Օշին Փիրումեան, Տիրան Վահրատեան, Ֆետի Խաժակ Գագանճեան եւ քոյր Թալին Օրտողլեան: Ներկայ էին նաեւ ՀՄԸՄ-ՀԱՍԿ-ի վարչութեան անդամներ, ինչպէս նաեւ՝ Հայաստանի մէջ Իրաքի եւ Պուլկարիոյ դեսպաններու ներկայացուցիչներ:

Բացման արարողութիւնը ընթացք առաւ բանակողներու հանդիսաւոր կերպով բանակավայր մուտքով: ՀՄԸՄ-ի Շրջանային եւ Մեկուսի 30 շրջաններէ եւ Իրանի «Արարատ», «Սիփան» եւ «Նայիրի» միութիւններէն 750 բանակողներ կարգապահ շարքերով իրենց տեղերը գրաւեցին դրօշակի կայմերուն դիմաց: Հաջորդ էր ՀՄԸՄ-ի Արցախի սկաուտներուն բացակայութիւնը: Բոլորը միտքով ու հոգիով այդ պահուն բանակումէն զրկուած Արցախի սկաուտներուն հետն էին:

Տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն: Հայաստանի, Արցախի, ՀՄԸՄ-ի սկաուտական եւ բանակումի քայլերգներով բարձրացան Հայաստանի, միջազգային սկաուտութեան եւ բանակումի մասնակից շրջաններու երկիրներուն դրօշները: Հանդիսութիւնը վարեց բանակումի հերթապահ Արամ Գայսերեան, Արեւելեան Ս. Նահանգներէն:

Աւելցնենք, որ բանակումին կը մասնակցէր նաեւ ՀՄԸՄ-ի Սուրիոյ շրջանի ներկայացուցչական խումբը:

## ՀԱՄԱ-ՀՄԸՄ-ԱԿԱՆ...

Սկիզբ՝ էջ 11

րած շքերթը երկարեցաւ շուրջ մէկ ժամ: Տողանցեցին բանակումին խմբապետական ընդհանուր եւ գործադիր կազմերը, ապա բոլոր պատուիրակութիւնները՝ շրջաններու անուններու այբուբենական շարքով: Խորխտ ու խիզախ բանակողներու առջեւէն տողանցեցին Հայաստանի, Արցախի, ՀՄԸՄ-ի, ՀՄԸՄ-ի սկաուտութեան եւ համա-ՀՄԸՄ-ական 12-րդ բանակումի դրօշները պարզած սկաուտներ:

### ԾԻԾԵՆԱԿԱԲԵՐՈՒ ՄԵՃ

Երեւանի շքերթէն ետք, երեկոյեան ժամը 8-ին, համա-ՀՄԸՄ-ական 12-րդ բանակումի մասնակիցները ուղղուեցան Հայոց Ցեղասպանութեան նահատակներու Ծիծեռնակաբերդի յուշահամալիր, ուր լուռ եւ կարգապահ շարքերով տողանցեցին մուտքէն մինչեւ անմար կրակին շուրջ առաջնորդող երթուղին: Այս առիթով, ՀՄԸՄ-ի մեծ ընտանիքին անունով, Կեդրոնական Վարչութիւնը գետեղեց ծաղկեպսակ մը, մինչ Կեդրոնական Վարչութեան ատենապետ երբ. Վաչէ Նաճարեան յարգանքի իր խոնարհումը ընծայեց մեր մեկուկէս միլիոն սրբադասուած նահատակներու յիշատակին:

Անմար կրակին շուրջ, սկաուտներ կատարեցին ծաղկեմատոյց: Հոգեւոր հայրերու գլխաւորութեամբ կատարուեցաւ աղօթք եւ հոգեհանգըստեան պաշտօն:



## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

**Կիլիկեան Կրթական Հաստատութիւնը 2023-2024 տարեշրջանին համար կարիքը ունի հետեւեալ պաշտօններուն.**

- 1.- Նախակրթարանի համալսարանաւարտ մասնագետ ուսուցչուհիներու,
- 2.- Երկրորդական տեսուչի,
- 3.- Երաժշտութեան ուսուցիչի,
- 4.- Վարորդի:

**Փափաքողները կրնան դիմել Կիլիկեան Ճեմարանի Տնօրէնութեան Երկուշաբթի եւ Երեքշաբթի օրերը առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ ժամը 12:00:**

*Կիլիկեան Ճեմարանի Տնօրէնութիւն*



Պրիմակետ

ՊԱՐՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆԸ



Մարուշ Երամեան

Երեք բաներ գիտարթուն հպարտութեամբ կը լեցնեն՝ հայ ըլլալս, հայերէն լեզուն եւ Քարեն Եփփէ Ազգային Ճեմարանի սան ըլլալս: Այս երեքը սրբութիւններ են:

Չորրորդ մըն ալ կայ, որ աւելի երրորդին կը կապուի՝ պարոն Մկրտիչեանին աշակերտած ըլլալս:

Գիտէի թէ պարոն Մկրտիչեանը Երուսաղէմի Ժառանգաւորացէն ներս աշակերտած է Յակոբ Օշականի. հետեւաբար իրեն աշակերտելով ես ալ կ'ըլլամ Յակոբ Օշականի աշակերտին աշակերտը ... Իրաւունք չունիմ հպարտ զգալու:

Պարոն Մկրտիչեանը ... Եռանկիւն գլուխ մը եւ մտածող նայուածք, աւելի՛ քեզ պրպտող նայուածք, մանաւանդ երբ աշակերտ ես, նոր ճեմարան մտած ես եւ տակաւին միջնակարգի առաջին կարգի աշակերտ ես:



Ինչէր կը պատմէին իր մասին, իր տուած դասերուն մասին, պատմածներուն մասին, ու մանաւանդ այն իրողութեան մասին, որ ինք եղած է աշակերտը մեծն Յակոբ Օշականի, Երուսաղէմի Ժառանգաւորացէն ներս:

Այս վերջին իրողութիւնը շատ կը խանդավառէր զիս, միաժամանակ ակնածանք մը պարտադրելով պարոն Մկրտիչեանին հանդէպ:

Տակաւին մեզի չէր դասաւանդէր, ինք միայն երկրորդականի երեք դասարաններուն հայերէնի եւ հայ գրականութեան դասատուն էր. մենք դեռ երեք տարի կ'ուզէինք վայելելու համար իր այնքան գովաբանուած դասապահերը:

Բայց երեք տարին երկար էր, շա՛տ երկար ինծի համար, որ նոյնիսկ պարոն Մկրտիչեանին ձայնը չէի լսած տակաւին:

Եւ օր մը, երբ տեսները թելին տակ սեղմած, մէկ ձեռքին սիկարէթը, գլուխը ձախի վրայ ծած մանր քայլերով դէպի ուսուցչարան կ'ուղղուէր, ամբողջ քաջութիւնս հաւաքած մօտեցայ իրեն եւ ըսի.

-Կրնամ ձեզի բան մը հարցնել:

Պահ մը կեցաւ, նայեցաւ՝ իր աշակերտներէն մէկը չէի, չէր ճանչնար զիս, հաւանաբար չէր իսկ նշմարած, բայց ըսաւ.

-Այո, անշո՛ւշտ:

-Ի՞նչ կը կոչուի հին եգիպտացիներուն, այսինքն փարաւոններուն խօսած լեզուն ...

Ուրկէ՞ մտածեր էի այս հարցումը, չեմ գիտեր. ուրիշ բան հարցնել միտքէս չէր անցած: Պարոն Մկրտիչեանը ինք ալ կարծես գարմացաւ եւ պահ մը լռեց:

-Փարաւոններէ՛ս, - հարցուցի:

Վստահ եմ որ պատասխանը մը տուաւ այդ օրը ինծի, բայց չեմ յիշեր թէ ինչ էր իր պատասխանը իմ այնքան ... անճարակ հարցումիս:

Կարելորդ՝ լսեցի պարոն Մկրտիչեանին ձայնը:

Յետոյ շա՛տ պիտի լսէի այդ ձայնը, երբ գրատախտակին առջեւ կեցած եւ ձեռքերը շարժելով բան մը կը բացատրէր. այնքան լաւ կը բացատրէր, այնքան ճիգ կը թափէր, որ իր ունեցած սերը հայ լեզուին եւ գրականութեան հանդէպ մեզի փոխանցէ ...

Բայց տղաքը կը ձանձրանային եւ անշուշտ՝ չէին համարձակեր ընել այն, ինչ որ կ'ընէին այլ ուսուցիչներու դասապահերուն, օրինակ ասի մը մանր մետաղադրամները, իբր թէ անուշադրութեամբ, մեծ թափով գետին թափել, իրար վրայ գնդակուած թուղթեր նետել, աղջիկներուն մազերը քաշել, կամ «հետաքրքրական» նկարներով անոնց ուշադրութիւնը շեղել եւ այլ մանկական խաղեր ընել:

Նոյնիսկ եթէ դասին չհետեւէին, հայերէնի դասապահերուն գոնէ լուռ կը մնային. երբեմն նաեւ բաց աչքերով կը քնանային:

Բայց պարոն Մկրտիչեանին աչքերէն - թէեւ անոնք իրարու հակառակ ուղղութիւններով կը նայէին կարծես - բան չէր փախեր.

-Ետալեան, կը քնանա՞ս:

Եւ ետալեանը թափով արթնցած, հագիւ կրնար «ո՛չ, պարոն, ձեր ըսածին կը հետեւիս» ըսել:

-Ըսէ նայինք ըսածես որքա՞ն բան հասկցար:

Խեղճ տղան ի գուր մատով կը հրմշկուէր իր առջեւ նստած Չարուկին կռնակը. քիչ առաջ մազերը այնքան ուժգին քաշեր էր, որ Չարուկը խռո-

ված, յամառօրէն կը լռէր:

-Գիտեմ քու լսելը. նստե՛ եւ դասին հետեւէ՛:

Միայն շարադրութեան դասերուն էր, որ տղաքը խանդավառութեամբ իրենց խելապատիկէն ելածները կը գրէին եւ անհամբեր կը սպասէին Պարոնին ըսելիքներուն:

-Ետալեան, այս անգամ ո՞վ գրեր է շարադրութիւնդ:

Եւ ետալեանը, իր ամենէն լուրջ դեմքով կ'ըսէր.

-Մամաս, պարո՞ն, - կապկելով մանուկներուն ձեռք:

Եւ դասարանը կը բռնուէր խնդուքի վարակէ մը:

Օր մը դասարան մտաւ պարոն Մկրտիչեանը եւ ուղղակի Կորիւնը կանչեց կարողալու իր շարադրութիւնը:

Կորիւնը, որ մեր դասարանին եւ կարծեմ ամբողջ ճեմարանին բանաստեղծն էր եւ որպէս այդպիսին, յատուկ խորհրդաւորութիւն մը կը պահէր իր մտածկոտ լռութեան տակ - յետոյ, շա՛տ ուշ պիտի իմանայի, որ սրտին ցաւէն էր հանդարտութիւնը - գնաց կեցաւ դասարանին առջեւ, դանդաղ-դանդաղ բացաւ տետրակը, պահ մը լռեց ու յետոյ սկսաւ կարդալ.

«Ծով պիտի գաս հեշտանքով,

ծով հեշտանքով, անխռով,

երազներուս մէջ խռով,

մշտահովով գորովով»:

Եւ այսպէս յանգաւորուած, չափ ու կշռոյթով քանի մը համար կարդաց ու սպասեց:

Դասարանը լուռ կը սպասէր: Գիտէիք որ Կորիւնին քերթուածները սկստը էին երեւի «Բագին» ամսագիրին մէջ, բան մը որ մեզ շատ կը տպաւորէր, սակայն տակաւին չէինք լսած կամ կարդացած իր գրածները:

Տպաւորուէր էինք յանգերով եւ կարճ ու արագ կշռոյթով. բոլորս ալ կարծես հաւներ էինք Կորիւնին գրածը:

-Այո ... մշտահովով գորովով ... ծով պիտի գաս հեշտանքով, մշտահովով գորովով ... այո, շատ լաւ է ...

Ետեւի տղաքը սկսան ծափահարել, սուլել, «բանաստեղծ-մանաստեղծ» կանչել, դասարանը իրար անցաւ, Կորիւնը նախ կարմրեցաւ, ապա սկսաւ ինք ալ խնդալ, մինչ պարոն Մկրտիչեան խիստ լարուած աչքերով կը դիտէր մեզ:

Ի վերջոյ հանդարտեցանք, լռեցինք:

-Պարոն, «Ծատ լաւ» մը պիտի դնէք Կորիւնին, չէ՞, - ըսաւ ետալեանը իր սովորական համարձակութեամբ:

-Ո՛չ:

-Ինչո՞ւ պարոն ...

-Որովհետեւ ասիկա շարադրութիւն չէ՛ ...

-Բայց բանաստեղծութիւն է, - ըսաւ համարձակ Անդօն, - ասիկա գրելը աւելի դժուար է, կարծեմ ... չէ՞ ...

-Եթէ այդքանը չես գիտեր, ինչո՞ւ կարծիք կը յայտնես:

-Պարոն, Կորիւնը մեր դասընկերն է, պետք չէ՞ իր «շատ լաւ»-ը ասպահովենք:

-Նախ դուն քու յաջողութեանդ նիշը ասպահովէ, - ըսաւ պարոն Մկրտիչեանը եւ դառնալով Կորիւնին, աւելցուց, - շատ լաւ է, տղա՛ս, բայց յաջորդին տուած նիւթովս շարադրութիւն գրէ՛:

Երբ տրամադրութիւնը լաւ ըլլար, պարոն Մկրտիչեանը երբեմն մեզի յուշեր կը պատմէր.

-Կեանքիս մէջ մէկ անգամ միայն լման նիշ դրեր եմ հայերէնի քննութեան, - պատմեց, - Արա Որբերեանին. բացառիկ աշակերտ էր. անոնց ամբողջ դասարանը բացառիկ դասարան էր. ճեմարանը անգամս ալ չունեցաւ նման դասարան ...

Յայերէնի քննութիւններուն ո՛չ միայն հարցումներուն պետք էր լրիւ ճիշդ պատասխանած ըլլայինք, այլ պետք էր մեր ուղղագրութիւնը անսխալ ըլլար. այսօր այդպէս չէ դժբախտաբար. «Պատմութեան քննութեան ինչո՞ւ պետք է ուղղագրական սխալները նկատի առնուին եւ նիշ պակասի անոնց համար» յաճախ կը գանգատին ծնողք կամ բարձր դասարանի աշակերտներ:

-Յայրս երեք անգամ սրբագրեց քննութեանդ թուղթը, ես ալ գլխուն վրայ կեցած կը հետեւէի. «Դի՛ր սա քառասունը, տեսար որ անսխալ է», ըսի: Չդրաւ. «Անկարելի է, - ըսաւ, - անպայման սխալ մը ըլլալու է» եւ կրկին սկսաւ սրբագրել թուղթը ծայրէ ծայր: Երեք անգամ: Ի վերջոյ, ճարահատ, դրաւ քառասունը, - պատմեց Սեւակը, պարոն Մկրտիչեանին տղան, որ ինձմէ երկու դասարան վար էր: Գիտնալու մի՛ գար, - թելադրեց, - բայց ուրախացար, չէ՞ ...

Ինչ որ ըսեր, կը հետեւէի, լի ու լի կը կատարէի: Մէկ խրատ միայն, որուն դժբախտաբար չհետեւեցայ եւ շա՛տ ուշ անդադարձայ, որ սխալներ էի չհետեւելով. թելադրեր էր, որ անգլերէն գրականութեան հետեւիմ ...

Այսօր քանի՞ հոգի կը յիշէ մեր սքանչելի պարոն Մկրտիչեանը, որուն վերջին աշակերտները ո՞ր թուականին շրջանաւարտ եղան ճեմարանէն, չեմ յիշեր: Պարոն Մկրտիչեանը գաղթեց, մօտ ըլլալու համար գաւակներուն, որոնք Ամերիկա գացեր էին: Վստահ եմ, բոլոր իրեն աշակերտածները կը կարօտնային զինք, որքան ես:

Լոյսերու մէջ մնայ:



## ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ Է - Դ. ԲԱԶՈՒՄ ԱՆԴՈՒՆՂՆԵՐ ԵՒ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹԻՒՆՆԵՐ



U. Ushakyan

### Բազկի Եւ Սոքի Հօտանքները

Նախորդ սինակներուն մէջ, ըստ բաւականին (կարելի է սպառնիչ ըլլալ) խօսեցանք ազգի բոլոր ուժերը, մասնագետներու եւ հայրենիքի շահերուն նախանձախնդիր ձեռքերու միացման հրամայականին

յին եւ, մէկ խօսքով՝ երկրի մը կեանքը մարմնաւորող գրեթէ բոլոր ուղորտներուն մէջ (ձախաւեր կուպրապատումները շատ բան չեն փրկելը...): Յստակ է, որ գործի կանչուելիք մասնագետները իրենց դիմաց պիտի գտնեն առաջին եւ երկ-



մասին՝ իբրեւ առաջին նախադրուէալ: Հիմա քայլ առ քայլ կանգ առնենք՝ դարձեալ հպանցիկ անկարկներով՝ աշխատանքի այն դաշտերուն առջեւ, ուր պիտի յանդգնին ոտք կոխել փրկարար աշխատանքը յանձն առնողը, անոր կողքին կանգնողները:

Իբրեւ ընդհանուր հաստատում, արձանագրենք հետեւեալը. Ազգային Փրկութեան ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐՈՒ Կառավարութիւնը նկատի պիտի ունենայ երկու մեծ ոլորտ՝ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔ (բոլոր մարզերով) եւ ԱՐՏԱԶԵՆ ԱԾԽԱՐԿ (հիմնականին մէջ՝ դիւանագիտական ոլորտը):

Կասկածէ վեր է, որ Հայաստան, իբրեւ ազգային պետականութիւն, վերջին տարիներուն անկումէ անկում ու կորուստէ կորուստ գնաց, «շնորհիւ» անատակներու եւ հայրենիք հասկացութեան անհաղորդներու խմբակին, որ արդարացուց այն մեղադրանքը, թէ այս խմբակը երկրի դէպքին թերուած է այլոց, նաեւ թըշնամիներու շահերուն ծառայելու համար: Ո՛չ մէկ կասկած, որ փրկարար աշխատանքը կրնայ սկսիլ միայն այն ատեն, երբ այս վարչախումբը հեռանայ-հեռացուի իշխանութենէն:

Այս նախապայմանը ընդունելի՝ չի նշանակեր, որ Փաշինեանի ու «ուսապարկեր»-ուն հեռացումը ինքնաբերաբար մոզական գաւազանի ազդեցութիւն պիտի ունենայ եւ տագնապները, դժուարութիւնները, ճախնական ինքնագործ կառաշարի մը պէս, պիտի երթան դեպի լուծում: Ընդհակառակն. այս խմբակին հեռացումը պիտի նշէ միայն սկիզբն երկանց:

Փաստօրէն, անչափելի կորուստներ արձանագրուած են գիւնուծի, քաղաքական-դիւանագիտական, տնտեսական (բազում մարզերով), ընկերային, մշակութա-

րորդ կարգի... առաջնահերթութիւններ: Սա բնականաբար կ'ենթադրէ համընդհանուր գորաշարժը: Տեղ մը նշեցինք, որ ճատրակի աշխարհին մէջ, հայը իր փառաւոր տեղը գրաւած է ու կը պահէ: Հիմա, ճատրակի հետեւողութեամբ՝ մեր կարողականութիւնը պիտի դրուի ի սպաս հայրենիքին, ամբողջ Հայաստանին ու ազգին, փրկութեան եւ ապագայի կերտման: Եւ քանի կը խօսինք միտքի հզօրանքին մասին, շեշտենք, որ մտաւորականները հիմնական դեր մը ունին յաջորդ՝ վերականգնումի փուլին հունաւորման մէջ, ճիշդ այնպէս՝ ինչպէս ըրաւ Արցախեան շարժումը առաջնորդ սերունդը, իսկ անկէ տասնամեակներ առաջ՝ «Մեր հողերը, մեր հողերը» շարժումը վերականգնողները (հապա Հայկական Չարթօնքը կերտողները...):

Առնենք ուրիշտ առ ուրիշտ, սկսելով ներքին դաշտերէն (պիտի ընտրենք մէկ քանին):

### Բանակ Եւ Չինուծ

Ո՛չ մէկ կասկած, որ մեր բանակն ու գինուորական տարագ կողմ միւս միաւորները, ներառեալ ներքին ապահովութեան ուժերը, կը կարօտին լիակատար վերաարժեւորման եւ վերագինման: Չինուծի երկու գլխաւոր թելերը՝ բանակ եւ ներքին ապահովութեան ուժեր, տարբեր որակի հարուածներ եւ վարկաբեկումներ կրած են: Բանակը ահաւոր կորուստներ կրեց 44-օրեայ պատերազմին (պատերազմի նախօրեակին կը խօսուէր շուրջ 60 հազար բանակայիններու մասին): Շուրջ 5 հազար նահատակ, անելի քան 10 հազար վիրաւոր-հաշմանդամ, այսինքն՝ բանակին կարողութեան մօտաւորապէս 25 առ հարիւրը՝ չեզոքացուած: Յետոյ վրայ հասան բարձրաստիճան սպաներու եւ

հրամանատարներու հետապնդումները, բանտարկութիւններ, պաշտօնագրկումներ, եւ այդ բոլորին վրայ ալ՝ 11 հազար դասալիքի մասին գրոյցներ, որոնք «թելադրուեցան» Ատրպեյճանէն: Եթէ յանցաւորներ եւ թերացողներ կան, անպայման որ պետք է պատժուին, սակայն երբ աչքի առջեւ ունինք վերոյիշեալ թիւերը եւ բանակին մասին այլանդակ քարոզչութիւնը (յատկապէս վարչապետին յաճախակի ատուլիսներուն ճամբով)՝ երիտասարդը հայրենիքի պաշտպանութեան ծառայութենէն վանողը, արդէն յստակ կը դառնայ, թէ բանակին իրողական տկարացումը ինչպէ՛ս տեղի ունեցաւ եւ կը շարունակուի, թշնամին եւ Երեւանի իշխանաւորը ինչպիսի՛ գուգորութիւն ստեղծած են:

Բացայայտ է, որ գլխաւոր պատասխանատուն (պատասխանատուները) ձգուած են ազատ, գանոնք հաշուետուութեան կոչելու քայլերը կը մնան ձեւական, ունին խեղկատակութեան դիմագիծ եւ կը սարքուն կաշի փրկելու դիտաւորութեամբ (պատերազմին հետքերը քննարկող յանձնաժողովը...), հակառակ անոր, որ վարչապետն սկըսեալ, կատարուած են աղաղակող՝ «պատասխանատու եմ, բայց յանցաւոր չեմ»-ի, «կրնայի պատերազմը դադարեցնել առանց այսքան գոհ տալու»-ի, հիմա ալ՝ «գիս խաբեցին»-ի պէս խոստովանութիւններ, ուշադրութիւն շեղող բառախաղեր:

Բանակին տկարացման եւ մասամբ անկարողութեան մատուցելուն մէջ, կան այլ իրականութիւններ: Պատերազմին, հսկայական գէնքի կորուստ արձանագրուեցաւ: Չմտնենք այն այլանդակ բանավեճին մէջ, թէ պատերազմէն քանի մը ամիս առաջ «անպարտելի եւ մարտունակ» հռչակուած մեր բանակը 26 Սեպտեմբերին «պետք եղած գէնքերը չունէր», այլ խօսք՝ որ հայկական բանակը շուրջ 5 միլիառ տոլար

արժողութեամբ գէնք կորսնցուցած է պատերազմին: Պատերազմէն ետք, վերագինումը ըստ հարկաւորին տեղի չէ ունեցած: Հոս ալ չմտնենք «դրամ ունինք բայց գէնք չենք կրնար գնել»-ի պէս ինքնախայտառականներու ուղորտը, այլ բաւականապէս հարց տալով, թէ ինչո՞ւ մատուած են նման անկարողութեան: Տակաւին, Արցախի կորուստով՝ Հայաստանին պարտադրուած նոր եւ հիմէ գուրկ սահմանագիծը - որուն շուրջ հազար ու մէկ այլ դատարկաբանութիւն կը ծաւալի - չունի ինքնապաշտպանական անհրաժեշտ միջոցները: Թշնամին ոտնձգութիւնները վերածուած են հանապազօրեայ խաղի, որուն դիմաց, իշխանաւորներուն կեցուածքը կը թարգմանուի՝ «Է՞, դեռ չվարժուեցա՞ք» թելադրող ձեռնափութեամբ: Բանակը բազմիցս ապացուցեց, որ դիմադրականութիւնը եւ հայրենիքի պաշտպանութիւնը իրեն համար օտարոտի ու անկարելի բաներ չեն, քանիցս յաջողեցաւ, գոհեր տալով, պաշտպանել սահմանային այս կամ այն գօտին, ջոյ տալով, որ թշնամին գերիգոր, ջե, այլ անոր մէջ նստած կը մնայ այն վախկոտը, որ 30 տարի առաջ, պղծ յետին ոտքերուն մէջ կծկած շան պէս փախուստ տուաւ Շուշիէն եւ արցախեան այլ ամրութիւններէ (կը յիշէ՞ք Օմարի լեռնանցքին նուաճումը), սակայն նաեւ ունեցաւ ընկրկումներ: Երբ չ'երեւիր պաշտպանական յըստակ վարքագիծ, ամբողջական ճամբու քարտեզ, ամէն բան գոհ կ'երթայ «խաղաղութիւն կը բերենք» ցնդաբանութեան: Նուազ ողբերգական չեն այն տեղեկութիւնները, թէ սահմանային որոշ գօտիներու պաշտպանական միջոցները (խրամատ, ամրութիւններու հաստատում...) կը կատարուին մասնակի նախաձեռնութիւններու ճամբով:

(Դ. Շար. 1)

**«ԳԱՆՁԱՍԱՐ»**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Չարմիկ Գիւլբօշեան-Պողիկեան  
Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան  
Վեհան Պարսումեան  
Ձեւաւորող՝ Յովսէփ Գալօղեան  
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան  
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան  
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պողոսեան  
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Գիւլբօշեան  
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներն եւ աշխատակիցներն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամէնէն ուշը երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:



## ԽԱԽԱՐԷԱ ԴԷՊՈՒ ԼՈՅՍ



Խորեն Զինյ. Պերթոպետան

Լուռ կը մնաս առ ի յարգանք  
Որ չըլլաս դուն այլոց փորձանք  
Կը նախընտրես անձայն մնալ  
Մեղանչելէն զգուշանալ:

Լուռ կը մնաս որպէս զարմանք  
Երբ խօսողին կեանքն է խաբկանք  
Կը փորձես դուն դատող չըլլալ  
Լեզուի մեղքին ընթացք չտալ:

Խօսք ըսելը խրթին կը զգանք  
Երբ կայ անվերջ վեճ, մեղադրանք  
Կը ստիպուիս դուն շատ ափսոսալ  
Բարդ վիճակէն շուտով դուրս գալ:

Լուռ մնալն է գուցէ տանջանք  
Երբ միտք չկայ, այլ՝ շարադրանք  
Յոգեշահն է յաւետ զովեալ  
Բարենպաստ եւ մեծարեալ:

Լուռ մնալն է յաճախ տուգանք  
Լաւ տուեալ է եւ սփոփանք  
Խիղճը արթուն, նուրբ, նուիրեալ  
Տիրոջ սիրով ո՛չ պապանձեալ:

Բարին եղաւ անարձագանգ  
Քանզի չարով կը պարծենանք  
Իսկ մեր Յոգին, անկեալ, տրտմեալ  
Փառքի ստրուկ, մեղքով մեռեալ:

Եթէ Աստուծոյ կը հաւատանք  
Իր սուրբ խօսքին ականջ կու տանք  
Պիտի ուզենք եղբայրանալ  
Մեր սխալին համար զղջալ:

Չիրար լսել եթէ մոռնանք  
Մենքէն պիտի օտարանանք:  
Չկայ մարդ մը սուրբ, կատարեալ  
Կոչուի անմեղ կամ ընտրեալ:

Աւելիով կը հայանանք  
Խաչով եսը երբ ուրանանք  
Ուստի հզօր «Մենք»-ով դարձեալ  
Պիտ տեսնենք օր լուսազարդեալ:



### ԿՐԹԱՍԻՐԱՆՆԵՐ

Սկիզբ՝ էջ 12

Այնուհետեւ, վարժարանի աշակերտական երգչախումբը ներկայացուց Կրթասիրացի քայլերգը, գեղարուեստական ղեկավարութեամբ տնօրէնի օգնական Յովիկ Օհանեանի, որուն ջանքերով պատրաստուած էին նաեւ հանդէսի երաժշտական կատարումները:

Վարժարանի պետական տնօրէնուհի Այիր Մուսան-Ատամ յայտնեց, որ 99-ամեայ երթ ունեցող Կրթասիրաց վարժարանը աշակերտներուն երկրորդ տունն է, ուր ուսման կողքին անոնք բարոյական արժէքներով կը դաստիարակուին:

Ապա Յալէպի սեփական ղըրոցներու ընդ. պատասխանատու Նուր Շամիէ այս առիթով իր սրտի խօսքը ուղղեց՝ շնորհակալութիւն յայտնելով ծնողներուն, ուսուցչական կազմին եւ տնօրէնութեան, որոնք ջանք չխնայեցին աշակերտները այս փուլին հասցնելու համար: Շամիէ երախտագիտութիւն յայտնեց Սուրիոյ վստմաշուք նախագահ տոքթ. Պաշշար ալ-Ասատին, որ միշտ կը քաջալերէ գիտութիւնն ու ուսումը:

Այնուհետեւ, իր սրտի խօսքը ուղղեց վարժարանի տնօրէն երկրչի. Անդրանիկ Պողոսեան: Ան անդրադառնալով 2022-2023 տարեշրջանի գործունեութեան յայտնեց, որ վարժարանը իր ունեցած նուստակրթական բծախնդիր գործունեութեան համար պարգևատրուեցաւ Յալէպի Կրթական Տնօրէնութեան կողմէ, որուն իր երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը յայտնեց:

Ապա շնորհակալութիւն յայտնեց ուսուցչական կազմին, ծնողաց Յանձնախումբին, քուլիսներու ետին աշխատողներուն, Կրթասիրաց Մշկթ. Միութեան Խնամակալութեան, Կրթասիրաց Ս. Չեմպերճեան Երկրչ. Վարժարանի Յոգաբարձութեան, Բերիոյ Յայոց Թեմի Նպաստից Մարմինին, Ընկերային Ծառայութեան Խորհուրդին, ՀՀ Յալէպի Գլխաւոր Հիւպատոսութեան, Գ. Կիլպէնկեան Հաստատութեան, Ամերիկայի Սանուց Միութեան, Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկին, Տորքաս հաստատութեան եւ բոլոր անոնց, որոնք միշտ նեցուկ կը կանգնին կրթօճախին: Ան յատուկ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր՝ իր հայրական բարձր հովանաւորութեան եւ հոգատարութեան համար: Ընդհակալութիւն յայտնեց պետական

կրթական տեսուչներուն, վարժարանի պետական տնօրէնուհիին, Յալէպի սեփական դպրոցներու ընդ. պատասխանատուին, Յալէպի պետական կրթական տնօրէնին եւ երախտագիտական խօսք ուղղեց Սուրիոյ վստմաշուք նախագահ Տոքթ. Պաշշար ալ-Ասատին, անոր մաղթելով քաջառողջութիւն եւ արեւշատութիւն:

Ապա, տնօրէն երկրչի. Անդրանիկ Պողոսեանի եւ ընդ. տեսուչ օրդ. Մարալ Դերձակեանի ձեռամբ տեղի ունեցաւ 2021-2022 տարեշրջանի միջնակարգի եւ երկրորդականի պետական քննութեանց բարձրագոյն նիշ ապահոված աշակերտներուն պարգևատրումը, ինչպէս նաեւ «Անդրանիկ եւ Սոնա Պողոսեաններ» մրցանակի տուցութիւնը՝ 7-րդ կարգէն մինչեւ 12-րդ կարգի հայերէն լեզուի եւ ընդհանուր նիւթերու մէջ առաջին երեք դիրքերը գրաւող աշակերտներուն: Տնօրէնը յատուկ գիրով պարգևատրեց վարժարանի երկրորդական կարգի ֆրանսերէն լեզուի եւ կրօնի դասատու՝ Փոլին Տիքը, ուսուցչական ասպարէզէն թոշակի կոչուած ըլլալուն առիթով:

Այնուհետեւ, ԺԲ. կարգէն խումբ մը աշակերտներ հրաժեշտի խօսք արտասանեցին արաբերէն եւ հայերէն լեզուներով: Հուսկ, տնօրէնը բեմ հրաւիրեց Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդը՝ կատարելու վկայականաց բաշխումը:

Սրբազան Յայոց բարձր գնահատեց երկրորդականի սերունդը անմահանուն Ամենայն Յայոց Բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի անունով կոչելու գեղեցիկ մտայնացումը եւ խօսքը ուղղելով երկրորդականի շրջանաւարտներուն մաղթեց, որ հզօր բանաստեղծին օրինակով ապրին հայրենասիրութիւնը, ազգասիրութիւնը, մեր ազգային, մշակութային եւ հոգեւոր արժէքները եւ այդ արժէքները կեանքի վերածելով ամէնօրեայ պայքարի ճամբով օրինութիւն եւ բարիք դառնան իրենց հայրենիքին՝ Հայաստանին, Արցախին եւ Սուրիոյ:

Հանդէսէն ետք, աշակերտները «Ճալաա» բացօթեայ ճաշարանէն ներս Սրբազան Հօր ներկայութեամբ այս առիթով պատրաստուած կարկանդակը հատեցին եւ իրենց ընտանիքներուն ու ուսուցիչներուն հետ հրաժեշտի հաճելի ժամեր անցուցին: Խրախճանքի հանդիսավարութիւնը կատարեցին հայրենով՝ տեսուչ Նայիրի Օհանեան-Մարգարեան, իսկ արաբերէնով՝ տնօրէնի օգնական Յովիկ Օհանեան:

Առաջնորդութիւն  
Բերիոյ Յայոց Թեմի

Ուսումնական  
Խորհուրդ

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

- 2023 - 2024 տարեշրջանին համար
- Ազգային Մանկապարտեզը կարիքը ունի համալսարանաւարտ, մասնագետ ուսուցչուհիներու:
  - Ազգային Միացեալ վարժարանը կարիքը ունի հետեւեալ նիւթերը դասաւանդող համալսարանաւարտ մասնագետներու.
  - Անգլերէն,
  - Արաբերէն,
  - Ընկերային Գիտութիւն,
  - Համակարգիչ:

Մանրամասնութեան համար հեռաձայնել 0932890929-0966463195:

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Կրթասիրաց Ս. Չեմպերճեան Երկրչ. Վարժարանը 2023-2024 տարեշրջանին համար կարիք ունի՝

- Տեսուչի,
- Երաժշտութեան ուսուցիչի,
- Վարիչի:

Դիմողները կրնան դպրոց ներկայանալ Երկուշաբթի եւ Երեքշաբթի օրերը, առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ 2:00:



## ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



### ԽՈՅ

Աշխատանքի դիմում մը կատարած էք եւ երկարատեւ կը սպասեք պատասխանի: Այս շաբաթ անակնկալօրէն պիտի ստանաք գայլ:



### ՑՈՒԼ

Այս շաբաթ սիրային ձեր յարաբերութիւնները պիտի բարելաւուին: Առաջին քայլը ճիշդ առեք, որպէսզի շարունակութիւնը երաշխաւորէք:



### ԵՐԿՈՐԵԱԿ

Ձեր ծրագրերն ունենան մասին բոլորը տեղեակ մի՛ պահեք, մանաւանդ եթէ անոնց առջնորդ առկա քաղաքացիները կան տակաւին:



### ԽԵՑՊԵՏԻՆ

Համբերութեամբ լուծեցէ՛ք ձեր հարցերը, որպէսզի անտեղի միջամտութիւններու պատճառով կացութիւնը չվատարանայ: Յօնք շտկելու գործերը երբեմն աչք կը հանեն:



### ԱՌԻՄ

Ժողովներ, կապեր, բանակցութիւններ ձեզ պիտի մղեն մտածելու, որ պետք է ներս ահմաններու մէջ պահեք ձեր աշխատանքը: Հարաւորութիւն պիտի տաք նոր առիթներու եւ առաջարկներու:



### ԿՈՅՍ

Պիտի կարենաք դուք ձեզի փաստել՝ առանց դժուարութեան եւ մեծ ճիգի: Ընդհանուր առմամբ, գորակցական ու դրական տրամադրութիւն մը պիտի շրջապատէ ձեզ:



### ԿԵՒՈՔ

Հանգիստ ըրէ՛ք, որք ձեզ անտեղի մի՛ յոգնեցնէք: Այս շաբաթ ընտանեկան հաւաքոյթ մը պիտի ուրախացնէ ձեզ:



### ԿԱՐԻՃ

Պիտի սիրահարիք եւ վիպապաշտ յարաբերութիւն հաստատեք մէկու մը հետ, որուն նկատմամբ միշտ ալ համակրանք ունեցած էք:



### ԱՂԵՂԱՄՈՐ

Յոյսը ձեր ընկերը պիտի ըլլայ այս շաբաթ, դժուարութիւն պիտի չճանչնաք, այլ պիտի ընթանաք վրձնական քայլերով եւ յաղթէք ձեր մրցակիցներուն:



### ԱՅԾԵՂՁԻՐ

Աշխատանք կազմակերպելու, գործերը բաժնելու եւ համագործելու ձեր կարողութիւնը մեծապէս ուշադրութիւն պիտի գրաւէ այս շաբաթ:



### ՋՐՈՍ

Ձեր շուրջիներուն վստահութեան պիտի արժանանաք, բոլորը պիտի գորակցին ձեր արտայայտած գաղափարներուն եւ քաջալերեն ձեզ:




### ՁՈՒԿ

Շատ մը դժուարութիւններ պիտի յաղթահարէք այս շաբաթ: Յաջողութիւններ պիտի կերտէք ու լաւատեսութեամբ պարուրուիք:



## ԻՆՉՈՒ ԹԵՐՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԸԸ ԽՈՅԵԼԻ ԿԸ ՀԱՍԱՐԵՆՔ

Doctors.am կայքին համաձայն, յաճախ թերութիւններ ունենալու վախը մեզ կը ստիպէ պահել մեր «մութ», մեզի համար ոչ այնքան գրաւիչ կողմերը: Խոցելի ըլլալու վախէն կը նուազի նաեւ նախաձեռնութեան մեր ոգին: Փոխարէնը տեսարար կը սկսինք մենք մեզ պաշտպանել, նոյնիսկ այնպիսի պարագաներու, երբ պաշտպանուելու կարիք չկայ եւ մեր ընթացքը շատ բնական է:



Անձնական թերութիւններու մերժումը թերագնահատանքի բարդոյթի կրնայ վերածուիլ, եւ մեզի կը թուի թէ մենք պետք եղած չափով լաւ չենք: Հետեւաբար շարունակ ջանքեր կը սկսինք թափել՝ պահելու մեր իսկական «ես»-ը, որովհետեւ կը կարծենք, թէ հակառակ պարագային մարդիկ մեր թերութիւնները պիտի նկատեն եւ պիտի փոխուի մեր ստեղծած «կերպարը»:

Այս առումով, հոգեբաններ կը թելադրեն ընդունիլ թերութիւնները եւ ամբողջով չպահել գանոնք: Թերութիւնները ընդունիլը ինքնաճանաչման կարեւոր քայլերէն մէկը կը համարուի: Այս քայլը մեզ կը մղէ ըլլալու քաջ եւ չպահելու մեր թերութիւնները, հաւատալով որ կատարեալ մարդ չկայ եւ բնական է որ մեզ մէջ իւրաքանչիւրը որոշակի թերութիւններ ունենայ:

Ուստի եղէ՛ք ինքնավստահ եւ վայելեցէ՛ք ձեզի շնորհուած կեանքը:

## ՄՆՆԳԵՂԷՆԻ ՈՐ ՏԵՍԱԿԸ ԿԸ ՆՈՒԱԶԵՑՆԷ ԳԵՐՃՆՇՈՒՄԾՈՒԹԻՒՆԸ



Եթէ կ'ուզէք նուազեցնել ձեր գերճշուածութիւնը եւ հանգստանալ, անհրաժեշտ է հանգիստի ժամեր ունենալ օրուան ընթացքին, քունի ժամերը կարգաւորել եւ մարզանքի հետեւիլ: Բայց արդեօ՞ք գիտէք, որ կան սննդեղէնի որոշ տեսակներ, որոնք եւս կը նուազեցնեն գերճշուածութեան մակարդակը:

Գերճշուածութիւնը նուազեցնելու համար հարկ է օգտագործել ձուկ, հաւ, պտուղ, բանջարեղէն, ձաւարեղէն եւ առողջ ճարպեր: Այսինքն՝ պետք է օգտագործել քիչ մշակուած սնունդ, այնպիսի սննդամթերք, որ հարուստ է B կենսասնիթով (հորթի միս, հաւ, հաւկիթ, ձաւարեղէն), օմեկա-3 ճարպաթթուներով (աւոքատ, կտաւատի սերմեր, ծովային բոյսեր, ձիթաբլիթ, սաղմոն, սարտին, թոն, ընկուզեղէն), մակկիգիումով (աւոքատ, պանն, ծաղկակաղամբ, լեդի տուրմ, դրումի սեր-

մեր, շոմի), սպիտակուցներով (նուշ, հաւու կրծքամիս, հաւկիթ, ոսպ, պիստակեղէն, ձկնեղէն):

Հարկ է հեռու մնալ ոգելից ըմպելիներու, քաֆէյինի եւ քաղցրեղէնի առատ օգտագործումէն: Յիշեցնենք, որ միայն առողջապահական սննդամթերքի օգտագործումով կարելի է գերճշուածութեան ձեւերը մարմնէն հեռու պահել: Անհրաժեշտ է չափի մէջ պահել ֆիզիքական ծանրաբեռնութիւնը, լաւ քնանալ, բուժել քրոնիկ հիւանդութիւնները եւ մաքուր օդ շնչել:

Թեւեւ կարելիութիւն չունինք ազդելու մեր ծիւղերուն վրայ, ինչպէս նաեւ վերացնելու միջավայրին ազդեցութիւնը, սակայն առողջապահական սնունդ օգտագործելով, մեր նախասիրութիւններուն ժամանակ յատկացնելով եւ բնութեան գեղեցկութիւնը վայելելով կրնանք նպաստել մեր մարմնին առողջութեան:



### ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ՀԱՄԱ-ՀՄԸՄ-ԱԿԱՆ 12-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ԲԱՅՈՒՄԸ՝ «ԽՐՈՒՏ, ԽԻՉԱԽ, ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ» ՆՇԱՆԱԲԱՆՈՎ

Տարուան մը ակամայ ուշացումով, Ուրբաթ, 21 Յուլիսի երեկոյեան ժամը 6:15-ին (Երեւանի ժամանակացոյցով), Բիւրականի «Գառնիկ Մկրտիչեան» սկաւտական բանակավայրին մէջ ընթացք առաւ համա-ՀՄԸՄ-ական 12-րդ բանակումը՝ բացման արարողութեամբ մը, որուն ներկայ գտնուեցան ՀՀ Բիւրոյի անդամ Արսէն Համբարձումեան, ՀՀ Զայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեան, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Վաչէ Նաճարեան, անդամներ՝ Դաւիթ Յակոբ-



Շար.՝ Էջ 6 >

### ՀԱՄԱ-ՀՄԸՄ-ԱԿԱՆ 12-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՒՆ ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐԸ ԵՂԱԲԼՈՒՐԻ ԵՒ ԾԻԾԵՆԱԿԱԲԵՐԴԻ ՄԷՋ

Համա-ՀՄԸՄ-ական 12-րդ բանակումը իր աշխատանքները շարունակեց Բիւրականի մէջ, Հայաստան: Շաբաթ, 22 Յուլիսի յետմիջօրէին, բանակումի 750 մասնակիցները այցելեցին Երեւան եւ ծանօթացան մայրաքաղաքի տեսարժան վայրերուն: Ապա, պատուիրակուիներու պատասխանատուները մեկնեցան Արցախեան պատերազմներու նահատակաց պանթէոն՝ Եռաբլուր:

#### ԵՂԱԲԼՈՒՐԻ ՄԷՋ

Եռաբլուրի մէջ, ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներու եւ բանակումի խմբապետական կազմի առաջնորդութեամբ, սկաւտ պատասխանատուներ յարգանքի իրենց տուրքը ընծայեցին հայ ժողովուրդի վերջին 35 տարուան նահատակներուն, Արցախի համար իրենց կեանքերը զոհաբերած նուիրեալներուն: ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը յիշատակի եւ ոգեկոյման ծաղկեպսակ մը գետեղեց «Անծանօթ զինուոր»-ի յուշակոթողին առջեւ, ուր բանակողներուն անունով խօսք առաւ Եղբ. Շահան Աթմաճեան:



Եղբ. Շահան Աթմաճեանի խօսքէն ետք, Եռաբլուր այցելող համա-ՀՄԸՄ-ական 12-րդ բանակումի պատուիրակուիները յարգանքի իր տուրքը ընծայեց ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ, Արցախեան առաջին պատերազմի նահատակ Եղբ. Վարդան Բախշեանի շիրիմին: Տեղի ունեցաւ ծաղկեմատոյց եւ «Յառաջ նահատակ» քայլերգի խմբերգում:

#### ՄԱՍՆԱԿԻՑԱԿԱՆ ՊԱՏՐԱՍԿԱՆ ՇԵՐԹ՝ ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ

Երեւանի մէջ, երեկոյեան ժամը 7-ին, կազմակերպուեցաւ համա-ՀՄԸՄ-ական 12-րդ բանակումի պաշտօնական շքերթը, առաջնորդութեամբ ՀՄԸՄ-ՀԱՍԿ-ի սկաւտական շեփորախումբին եւ մասնակցութեամբ բանակումի մասնակից պատուիրակուիներուն:



Օփերայի «Ազատութեան» հրապարակէն ընթացք առած եւ «Աբովեան» փողոցով, «Հանրապետութեան» հրապարակով մինչեւ «Շահումեան»-ի հրապարակ երկա-

Շար.՝ Էջ 6 >

### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 448)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1			■						■			
2				■		■			■			
3					■		■					
4										■	■	■
5								■		■		
6			■			■		■				
7	■				■							
8							■	■	■	■		
9										■	■	
10			■			■		■			■	
11	■		■	■					■		■	■
12									■			

#### Հորիզոնական

- Աղբիւր: Պատերազմի առաջին գիծ: Խոշոր կապոց:
- Չուարթ: Հանքային համեմ: Հակառակ՝ փոքրացնող մասնիկ:
- Հակառակ՝ լեզուով մը «այո»: Հակառակ՝ շաղկապ: Բաղաձայն տառեր:
- Ամենօրեայ:
- Հասոյթ: 3001:
- Հակառակ՝ կրկին: Հակառակ՝ տառի մը անունը: Մուրճ:
- Լեցուն: Հաստատական պատասխան:
- Հողային կալուած, ուր ընտանի կենդանիներ կը պահեն:
- Վահան Թեքեանի քերթողագիրքերէն:
- Ժամանում: Լեցուն: Եւս:
- 1001 եկեղեցիներու քաղաքը:
- Ճամբայ բացող ռահվիրայ: Իգական անուն:

#### Ուղղահայեաց

- Նեղ ճամբայ: Ձախ կողմ:
- Կատակերգութիւն խաղացող, գրող:
- Հակառակ՝ անձնական դերանուն: Հակառակ՝ քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ պետական կրօնք հռչակուած թուականը: Առարկայ:
- Արհամարիել, անարգել:
- Եւս: Ագի: Զաջ:
- Աման շինելու գոյնգոյն հող: 63: Չայնաւոր տառեր:
- Կրկնուած ձայնաւորներ: Ընտրութենէ անցընել: Հակառակ՝ 4400:
- Հակառակ՝ սապատաւոր չորքոտանի:
- Արժեք: Հայ գուսան:
- Տառի մը անունը: Բայական լծորդութիւն:
- Սիամանթոյի ծննդավայրը: Ափսոսանքի՝ սպառնալիքի ձայն: Յարաբերական դերանուն:
- Ծեփի համար գործածուող գաճաքար: Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ. «Աչքդ ելլէ, ..... չելլէ»:

### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 447)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	տ	ր	տ	ն	ւ	օ	ք	ծ	ա	մ		
2	կ	ք	ի	ւ					լ	ա	լ	
3	ն		ր	ա	մ	ա	զ	ի	ծ			
4	ի	ն	ա	ա	ք	ա		կ	ր	է		
5	լ	ւ	կ	ի	հ	հ	ա					
6		ի	ա	ա	ա	լ	լ	ր	է	ս		
7	փ	ա	ն	ա	զ	ի	լ	ա	յ	ն		
8	ա	կ	ն	ի	ի	ա		ն		ւ		
9	ք	է	տ		ի	ճ	ա	ք	ա	ք		
10	թ	տ	ա	փ	ա	ա	ն	ա				
11	ա	ի		է	ք	փ	ա	ք	ա	ի		
12	մ		ա	ն	շ	ն	ւ	ք		կ		

ԼՈՒԾՈՒՄ

Երկուշաբթի  
31/7



23° 37°

Երեքշաբթի  
1/8



24° 38°

Չորեքշաբթի  
2/8



25° 37°

Հինգշաբթի  
3/8



24° 37°

Ուրբաթ  
4/8



25° 38°

Շաբաթ  
5/8



26° 42°

Կիրակի  
6/8



25° 41°



## ԱՐՅԱՆՈՒՄԵՐ...

Մկրտչի Էջ 1

Առաջին գեկուցաբերն էր պատմական գիտություններու թեկնածու, Արցախի կրթության, գիտության, մշակույթի եւ մարզանքի նախարարի տեղակալ Լեռնիկ Յովհաննեսյան, որ Արցախէն առցանց միանալով Ներկայացուց Արցախի շրջափակման մանրամասնութիւնները



Եւ շրջափակման հետեւանքով Արցախի տնտեսութեան եւ ընկերային կեանքին կրած վնասները, գործազրկութեան աճող համեմատութիւնը, սնունդի, դեղորայքի եւ յատկապէս առողջապահութեան ոլորտէն ներս ստեղծուած սուր տագնապը, մարդկանց տեղաշարժի եւ ապրանքներու փոխանակման տուկոսներուն կտրուկ նուազումը եւ այլն:

Անշեշտեց, որ Ատորպեյեանի անմարդկային այս արարքներուն դիմաց Արցախի ժողովուրդը կը շարունակէ տոկալ ու պահպանել իր հայրենիքը, սակայն անհրաժեշտ համահայկական զօրակցութիւնը չի շօշափեր: Չօրակցա-

շագգային ընտանիքէն պահանջը: Երկրորդ գեկուցաբերն էր իրաւաբան, միջազգային օրէնքի եւ մարդկային իրաւանց մասնագետ դոկտ. Գեորգ Յակոբեան, որ առցանց միացաւ Լիզայնէն:

Իր գեկուցի առաջին բաժինով ան մանրամասնօրէն ներկայացուց թէ Դեկտեմբեր 2022-էն սկսեալ Ատորպեյեանի կողմէ Արցախի շրջափակման հետեւանքով ինչպիսի՛ մարդկային իրաւանց խախտումներ արձանագրուած են: Իսկ երկրորդ բաժինով անդրադարձաւ միջազգային օրէնքի լոյսին տակ այն հնարաւոր միջոցներուն կամ հարթակներուն, որոնց դիմելով կարելի է վերջ տալ շրջափակման կամ գէթ փորձել ճշուն բանեցնել Ատորպեյեանի վրայ: Ան ներկայացնելով այս բոլորը ըսաւ, որ միշտ ի միտի պետք է ունենալ թէ համաշխարհային քաղաքակրթութիւնը չէ հասած գարգացման այն



մակարդակին, ուր իրաւունքի ուժը կրնայ գերիշխել ուժի իրաւունքին: Սակայն, անելցուց ան, պետք չէ յուսահատիլ ի տես քաղաքական ու տնտեսական շահերէ առաջնորդուող ղեկավարներու, այլ միշտ պետք է աշխատիլ հասնելու արդարութեան ու բարձրաձայնել մարդկային իրաւանց եւ օրէնքի բոլոր խախտումներուն մասին, որպէսզի երբ պատեհ առիթը ներկայանայ, յանցագործը պատասխան տայ ու արդարութիւնը հաստատուի:

Ապա Յակոբեան եւս պատասխանեց իրեն ուղղուած հարցումներուն եւ ներկաները իրագել դար-



ծուց Ատորպեյեանը դատապարտող արդարադատութեան միջազգային դատարանի եւ այլ ատեաններու բանաձեւերուն ու շրջափակման վերացումը պահանջող կոչերուն:

Լսարանը փակուեցաւ սրբազան հօր «Պահպանիչ» աղօթքով ու Արցախի Յանրապետութեան քայլերգով:

## ԿՐԹԱՍԻՐԱՅ Ս. ԶԵՄԴԵՐՃԵԱՆ ԵՐԿՐԴ. ՎԱՐԺԱՐԱՆԵՆ ՇՐՋԱՆԱԽՐՏ ԴԱՐՁԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳԻ ԵՒ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԻ ԽՈՍՏՄՆԱԿՅ ՇՈՒՆՁԵՐ

Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեշնչ Առաջնորդ Գեորգ Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, Կիրակի, 9 Յուլիս 2023-ին, երեկոյեան ժամը 6:00-ին, «2. Գաբրիէլեան» սրահէն ներս տեղի ունեցաւ 2022-2023 տարեշրջանի վկայականաց բաշխման հանդէսը, որուն ընթացքին Կրթասիրաց Ս. Զեմպերճեան Երկրորդական վարժարանէն շրջանաւարտ դարձան Թ. եւ ԺԲ. կարգերու խոստմալից հունձքեր: Երկրորդականի հունձքը կոչուեցաւ «Յովհաննէս Թումանեան» հունձք, յիշատակելու ամենայն հա-



յոց բանաստեղծին 100-րդ տարելիցը: Հանդէսին ներկայ էին Առաջնորդ Սըրբազան Հայրը, Հոգ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան, Հայկաի սեփական դպրոցներու ընդհ. պատասխանատու Նուր Շամիէ, Պարտադիր ուսման կրթական քննիչուհի Մունա ալ-Իտ, վարժարանի պետական տնօրէնուհի Ապիր Մուսան-Աւամ, Ազգ. վարչութեան անդամ Արմէն Գասպարեան, Կրթասիրաց Մշակութային Միութեան Խնամակալութեան ատենապետ Կարպիս Պարտաքճեան եւ խնամակալութեան անդամներ, վարժարանի Հոգաբարձութեան ատենապետ տղոք Ռաֆֆի Չէյթեան եւ հոգաբարձութեան անդամներ, վարժարանի տնօրէն երկրչփ. Անդրանիկ Պօղոսեան եւ աշակերտներու ծնողներն ու հարագատները:



Արաբերէն եւ հայերէն լեզուներով բացման խօսք արտասանեցին Թ. կարգի խումբ մը աշակերտներ, որոնք ողջունեցին ներկաները եւ երախտագիտական խօսքերով լաւագոյնը մաղթեցին իրենց երկրորդ տունը հանդիսացող կրթօճախին, տնօրէնութեան եւ ուսուցիչներուն:

Օրուան Հանդիսավարն էր Մարինա Պօղիկեան: Շրջանաւարտներուն կողմէ ներկայացուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, որ անմահացուց որբերու հայրիկ, ամենայն հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի անմար յիշատակը: Հանդէսի յայտագիրին խօսքերը եւ թատերական պատկերը պատրաստած էր հայերէնաւանդ ուսուցչուհի Նորա Տանակեօգեան-Մանսուրեան: Բացման խօսքերու պատրաստութեան եւ հանդէսին օգտակար դարձաւ հայերէնաւանդ ուսուցչուհի Լիլիթ Տոլմոլեան-Փայասեանը: Արաբերէն ասմունքները պատրաստուած էին արաբերէն լեզուի դասատու Սոնիա Թահիանի կողմէ:

Աշակերտուհիներու հեգաճկուն շարժումներով եւ տղոց արիական ոճով ներկայացուած պարերը խանդավառեցին ներկաները: Պարերը պատրաստուած էին տեսուչ Նայիրի Օհանեան-Մարգարեանի կողմէ, օժանդակութեամբ Լիլա Աթաշեանի: